

ISSN 1829-1155

ՍԱՅՄԱՆՎՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ԹԱՅԻՆԱԿԱՆ
ԽՈՐԲՈՒՐԻ

Գաօթել Տարություննան
Վահե Արեհիսկան
Վաղողա Խովհաննեխան
Վայերի Պաթայան
Վեռէկան Տակրուտն

Խմբավորության հասցեն՝
Երևան, Քաղաքամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(74)
2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՄԱՀՄԱՆԱԳՐԻԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1143-1160)

* ՍԴՈ-1143. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՏՔԵՐԻ ՊԱՇՏՈՒՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 37-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 5
* ՍԴՈ-1144. ՔԱՂԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹ ԿԱՐԵԵԼՈՒ ՄԱՍԻՆ 12
* ՍԴՈ-1145. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԽԱՍԱՏԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՎԱԾՈՒՄ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 19
* ՍԴՈ-1146. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԽԱՍԱՏԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 23
* ՍԴՈ-1147. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ՄԻՆԱԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱԶԱՏ ԱՈԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ» 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՈՒԶԲԵԿԱՍԻՆ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԻՐԱԾՈԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 28
* ՍԴՈ-1148. ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՍԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՏԻ 45.6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱԿՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 33
* ՍԴՈ-1149. 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՍՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՄՔԻ ԿԵՂԾՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՎԱՅՐԱԿԱՑՆՈՂ ՆՄԱՆԱՏԻՊ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 43
* ՍԴՈ-1150. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԿՐԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ, ԿԱԴԱՍՏՐԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՀԵՌԱՀԱՐ ԽՈՐԱՉԱՓՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1992 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՁԱՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 48	
* ՍԴՈ-1151. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀՅՈՒՍԽ-ՀԱՐԱՎ» ԲԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՈՒՅՑ» ՀԻՆԱՆԱՎԱԿԱՆ ՊԱՅԱՍԱԿՐՈՒՄԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 51	
* ՍԴՈ-1152. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) (ՀՅՈՒՍԽ - ՀԱՐԱՎ ԲԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՈՒՅՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ 3) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 60	
* ՍԴՈ-1153. ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՆԵՀ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՍՔԲԱՆՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ «ԱՆԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՅ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 66	
* ՍԴՈ-1154. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՇԽՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՎԵՏԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄԱՐԿԱՆԵՐԻ ԱՇԽՆԱՅՈՎՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅԹԱԳՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՆ ՍԱՍԻՆ» ԹԻՎ 604 ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 82	
* ՍԴՈ-1155. 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐԱՎԱՆԻԱՅԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՒԾՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 96	
* ՍԴՈ-1156. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՆ 31-ԻՆ ՄԻՆԱԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԳՅՈՒՂԱՏԱՏԵԱԿԱՆ ՍԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ ՀԻԲՐԻԴՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ, ՊՏՂԱՅԱՏԱՊՂԱՅԻՆ ՄԵԽԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԽԱՎՈԴՐ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՄԻՋԵՏԱԿԱՆ ՄԱՄԱԳԻՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 101	
* ՍԴՈ-1157. ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱԳԴԱՆ ԵՎԻԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (28.11.2007թ.) 139-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 140-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 104	

- * ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱԽԴԱՄ Կ. ԲԱԼԱՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ
ՄԱԳՆԱ ԵՂԱՋԱՐՅԱՆԻ ԴԱՄՈՒՄ ՀԽՍՄ ՎՐՄ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ (28.11. 2007թ.) 139-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 140-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-3-ՐԴ
ՍԱՍԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 111
- * ՍԴՈ-1158. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՅՈՒՍԽ-ՀԱՐԱՎ
ՃԱՄԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱ-ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՏՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 113
- * ՍԴՈ-1159. 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԲԲՅՈՒՆԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՊՈՐՈՒԹՅԵՐԻ ԾՐՁԱՆԱԿԱԿԱՆ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 117
- * ՍԴՈ-1160. 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԾՐԱԳԻՐ»
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 122

II. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ

- * ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ 3-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ ՍԵՈՒՆԼՈՒՄ 127
- * ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԸ ՍԴ-ՈՒՄ 130
- * ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՐԵՎԱՆՅԱՆ 19-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ 132
- * ԵՐԵՎԱՆՅԱՆ 19-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ 137
- * ՀՅՈՒՄԵՐ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 142
- * ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ 143



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ՕՐԵՆՍԳՐքի 37-Րդ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

8 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուբյոնյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Ա. Վարդենյանի, նույն վարչության մասնագետ Ս. Տերզիկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 22.11.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետագոտելով Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաբղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀՍՍՀ Գերազույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական տույժ նշանակելու ժամկետները» վերտառությամբ 37-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախումնը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող եւ տեսող իրավախախումնա դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Հիշյալ հոդվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել 18.08.93 ՀՕ-73, 23.06.97 ՀՕ-133, 13.06.06 ՀՕ-138-Ն, 11.05.11 ՀՕ-155-Ն, 09.02.12 ՀՕ-11-Ն, 05.12.13 ՀՕ-143-Ն ՀՀ օրենքներով:

2. Դիմողն իր դիրքորոշումը փաստարկում է նրանով, որ օրենսգրքի վիճարկվող նորմը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանզի չի սահմանում, թե որն է տեսող կամ շարունակվող իրավախախումնը: Ըստ դիմողի՝ ՀՀ օրենսդրությամբ եւս բացահայտված չէ «տեսող եւ շարունակվող իրավախախումն» եզրույթների բովանդակությունը: Նման պայմաններում, ըստ դիմողի, հստակ օրենսդրական սահմանումների, որոշակի պարտադիր չափանիշների եւ/կամ հիմքերի բացակայությունը (որոնց վրա կիմնվեր վարչական մարմինը՝ զանցքը տեսող կամ շարունակվող որակելու համար) արգելափակում է անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավուն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քի իրացումը, քանի որ չկան մեխանիզմներ նշված որոշումների դեմ հակափաստարկներ ներկայացնելու համար:

Ընդ որում, սահմանադրական դատարան ներկայացրած գրավոր բացարություններում հստակեցնելով իր փաստարկները, արձանագրելով այն փաստը, որ տեսող եւ շարունակվող իրավախախտումների վերաբերյալ առկա են դրկտրինալ աղբյուրներ, դիմողն ընդունում է, որ «տեսող եւ շարունակվող իրավախախտում» եզրույթների բովանդակությունը **պետք է սահմանվի ՀՀ օրենսդրությամբ** եւ իր հետագա փաստարկներում չի հիմնավորում վերը նշված եզրույթների բովանդակությունը **հենց օրենսգրքի վիճարկվող նորմում** սահմանելու անհրաժեշտությունը:

Դիմողը գտնում է նաև, որ օրենսգրքի վիճարկվող նորմի՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասելու պայմաններում կարող է խախտվել նաև «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված՝ միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելու արգելքի սկզբունքը եւ նույն օրենքի 5-րդ հոդվածը, քանի որ վերջին դեպքում վարչական մարմինների լիազորությունները՝ զանցանքը տեսող կամ շարունակվող որակելու տեսանկյունից, հստակ չեն:

Ըստ դիմողի՝ նման պայմաններում իրավակիրառը կարող է պարզ իրավախախտում եւս որակել որպես տեսող կամ շարունակվող իրավախախտում եւ անձին ցանկացած դեպքում ենթարկել վարչական պատասխանատվության՝ արարքը բացահայտելու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ չկիրառելով օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակային սահմանափակումը:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «տեսող իրավախախտում» եւ «շարունակվող իրավախախտում» հասկացությունների բովանդակության օրենսդրութեան բացահայտված շլինելը բավարար չէ այդ նորմը հակասահմանադրական դիտարկելու համար:

Իր դիրքորոշումը պատասխանողը հիմնավորում է նրանով, որ ինչպես լեզվաբանական, այնպես էլ օրենսդրական իմաստի տեսանկյունից «տեսող» եւ «շարունակվող» եզրույթները բավականին պարզ եւ հիմնականում միատեսակ ընկալելի են: **Պատասխանողը, որպես փաստարկ, վկայակոչում է համապատասխան բացարական բառա-**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բանը, ինչպես նաև համապատասխան մասնագիտական գրականությունը, որոնցում սահմանված են «տետղ» եւ «շարունակվող» եզրույթների լեզվաբանական եւ իրավաբանական իմաստները։ Ըստ պատասխանողի՝ համապատասխան դոկտրինավ մեկնաբանությունների առկայության պայմաններում դիտարկվող հասկացությունների օրենսդրական ամրագրումը չէր փոխի օրենսդրական կարգավորման էությունը, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ վարչական իրավախախտման կապակցությամբ որոշում կայացնելիս իրավակիրառն ստիպված է լինելու որոշում կայացնել այն մասին, թե արդյոք նշված իրավախախտումը տեղավորվում է համապատասխան հասկացությունների ներքո, թե՝ ոչ։ Պատասխանողի կարծիքով, խնդիրը տվյալ դեպքում ոչ այնքան դիտարկվող հասկացությունների օրենսդրական ամրագրման մեջ է, որքան վարչական յուրաքանչյուր իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմի դիսպոզիցիայում դրա բնույթի ամրագրման մեջ։

Միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմի հետ կապված դատական պրակտիկայում տարածույթ մեկնաբանություններ չկան, իսկ դրանց առկայության դեպքում իր էական դերակատարությունը կարող է ունենալ ՀՀ վճռաբեկ դատարանը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր առաքելությամբ։

Անփոփելով՝ պատասխանողը գտնում է, որ, մի կողմից, առկա կարգավորումները հնարավորություն են տալիս ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, մյուս կողմից՝ դոկտրինավ մոտեցումները, իրավունքի աղբյուր լինելով, կարող են ոչ իմպերատիվ քնույթի, սակայն էական կողմնորոշող ազդեցություն ունենալ իրավակիրառողի իրավագիտակցության վրա՝ համապատասխան նորմերի ընկալման եւ կիրառման հարցում։

Պատասխանողը նաև կարծիք է հայտնում հետագա օրենսդրական բարեփոխումների շրջանակներում տեսող կամ շարունակվող իրավախախտումների չափանիշների եւ հատկանիշների օրենսդրութեն ամրագրման նպատակահարմարության հարցը քննարկելի դարձնելու հնարավորության մասին՝ ելնելով պրակտիկայի թելադրած առաջնահերթություններից։

4. Համադրելով կողմերի դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված հիմնախնդիրը գլխավորապես հանգում է

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նրան, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի առկա կարգավորումների պայմաններում «...վարչական պատասխանատվության ենթարկված անձը վարչական մարմնի կողմից իրավախախտուման տեսող կամ շարունակվող որակելու հանգամանքին հակադարձելու հնարավորություն չի ունենա, որովհետեւ հստակ չի կարող ընկալել թե կոնկրետ, որ դեպքում իր կողմից կատարված իրավախախտումը ինչու է վարչական վարույթն իրականացնող մարմնի կողմից որակվել տեսող կամ շարունակվող»:

Փաստ է նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում տրված չեն «տեսող եւ շարունակվող իրավախախտում» եզրույթների սահմանումները: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ. «Եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները»:

Գործի նյութերից ակնհայտ է նաև, որ ապարդյուն են անցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փորձերը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ու դրա կիրառման հարցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եւ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանումներ ստանալու առումով: Տվյալ դրույթի առնչությամբ պաշտոնական պարզաբանում տալու հարցով հիշյալ մարմիններն իրենց չեն համարել որպես լիազոր մարմին:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից սահմանադրական դատարան ներկայացված 27.03.2014թ. թիվ ԴԴ-1 Ե-1703 տեղեկանքի համաձայն՝ վեճի առարկա իրավադրույթների վերաբերյալ դատական պրակտիկա ձեւավորված չէ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տվյալ հարցի առնչությամբ նախադեպային նշանակության որեւէ որոշում չի կայացվել:

5. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ. «.... Հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը»: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթը պարունակող հոդվածը կրում է «Վարչական տույժ նշանակելու ժամկետները» վերտառությունը: Համապատասխան հոդվածի վերլուծությունից

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քիում է, որ վերջինս կոչված չէ սահմանելու վարչական իրավախախտումների տեսակների հասկացությունները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը եւս վկայում է այն մասին, որ նույնիսկ տեսող եւ շարունակվող վարչական իրավախախտումների հասկացությունների օրենսդրական ամրագրման պայմաններում վերջիններս եւ վարչական իրավախախտումների համար վարչական տույժեր նշանակելու ժամկետները սահմանվում են համապատասխան ակտի տարրեր հոդվածներում: Ուստիեւ, վիճարկվող հոդվածում տվյալ հասկացությունների բացակայությունն ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը պայմանավորված է ոչ քե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավակարգավորումներով, այլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում **լնդիանրապես «տեսող» եւ «շարունակվող» իրավախախտումների հասկացությունների բացակայությամբ:**

Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել օրենսդրական բացի եւ իրավական եզրույթների սահմանումների օրենսդրական ամրագրման բացակայության հարաբերակցությունը: Նշվածի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սուկ այս կամ այն եզրույթի օրենսդրութեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, եթե իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի բերի կանոնակարգման հետեւանքով խարարվում է օրենսդրութեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը: Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի տեքստում տեսող եւ շարունակվող իրավախախտումների սահմանումների բացակայությունն իրավական հասկացության **օրենսդրական կանոնակարգման բացակայություն** է:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914 եւ ՍԴՈ-933 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը համդիսանում է

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, եթե իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա նորմի տարակերպ մեկնաբանություններով, այլ պարզապես օրենսդրի կողմից օրենքում կիրառված հասկացությունները հստակեցված չեն: Առկա վիճակն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում:

7. Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախսախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 ապրիլի 2014 թվականի
ՍԴ-1143



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԵԴԱՔԱՑԻ ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ

**ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՄԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՑԸ**

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ

ԿԱՐճԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան

15 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուղյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ քաղաքացի Լ. Պողոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեուանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրսաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Լեւոն Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը քաղաքացի Լ. Պողոսյանի՝ 2013 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական եւ անհիմն որոշումների եւ գործողությունների բողոքարկումը դատարան» վերտառությամբ 290-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ մասը սահմանում է.

«4. Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին եւ վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի ներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը եւ դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն»:

2. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

Լետն Պողոսյանը բողոք է ներկայացրել Երեւան քաղաքի Մալարիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 09.12.2011թ. որոշումը: Դատարանի 08.02.2012թ. որոշմամբ բողոքը մերժվել է, ինչը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որն էլ 15.03.2012թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է: Նշված որոշման դեմ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լ. Պողոսյանի վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 17.05.2012թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

Հիմք ընդունելով թիվ 16541106 տեսաձայնագրային փորձագիտական եզրակացությունը՝ Լեւոն Պողոսյանը 01.11.2012թ. դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ միջնորդելով հիշյալ եզրակացությունը դիտել որպես նոր երեւան եկած հանգամանք եւ վարույթ հարուցել: Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ս. Սինանյանի կողմից 13.11.2012թ. որոշում է կայացվել նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով վարույթի հարուցումը մերժելու մասին, քանի որ Լ. Պողոսյանի կողմից նշված եզրակացությունն առկա է քրեական գործում, որը քննիչի կողմից ներկայացվել է դատարան եւ այն ուսումնասիրվել է: Նշված որոշումը բողոքարկվել է, ինչի արդյունքում Երեւան քաղաքի դատախազի պաշտոնակատար Ս. Խաչատրյանի կողմից 06.12.2012թ. բողոքը մերժելու մասին որոշում է կայացվել:

Լեւոն Պողոսյանը բողոք է ներկայացրել Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ս. Սինանյանի կողմից 13.11.2012թ. կայացված՝ նոր երեւան եկած հանգամանքների հետեւանքով վարույթի հարուցումը մերժելու մասին ու Երեւան քաղաքի դատախազի պաշտոնակատար Ս. Խաչատրյանի կողմից 06.12.2012թ. կայացված՝ բողոքը մերժելու մասին որոշումները: Դատարանը 29.01.2013թ. «Բողոքը քննության առնելու մասին» որոշմանը Լ. Պողոսյանի բողոքը մերժել է: Նշված որոշման դեմ Լ. Պողոսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաբեննիշ քրեական դատարանի 15.03.2013թ. որոշմանը մերժվել է՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2013թ. որոշումը բողնելով օրինական ուժի մեջ:

Լ. Պողոսյանը ՀՀ վերաբեննիշ քրեական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել, որի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 14.05.2013թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ դրանք լիարժեք չեն ապահովում անձի դատական պաշտ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պանության սահմանադրական իրավունքի իրացումը, արդար ու անաշար դատաքննությունը՝ հակասելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ և 91-րդ հոդվածներին:

Դիմողի կարծիքով, ըստ վիճարկվող նորմի՝ վարույթն իրականացնող մարմինն ինքն է որոշում ինչ նյութեր տրամադրել դատարանին եւ ինչ նյութեր թաքցնել դատարանից: Այս հանգամանքն ստեղծում է արդարադատության իրականացման եւ օրինականության համար ծանր վիճակ, չարաշահումների հող, քանի որ վարույթն իրականացնող մարմինը տրամադրում է դատարանին միայն այն նյութերը, որոնք չեն ժխտում իր որոշումը եւ չեն բացահայտում քննչական մարմնի կողմից արված կոպիտ խախտումները: Այս դեպքում դատարանը գրկված է լինում լրիվ, օբյեկտիվ եւ բազմակողմանի տեղեկությունից:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ և 91-րդ հոդվածներին:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող նորմն իր առաքելությամբ, կարգավորումներով եւ գործող խմբագրությամբ չի կարող դիտվել հակասահմանադրական, քանի որ հստակ եւ միանշանակ ամրագրում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական հսկողություն իրականացնելու հնարավորությունն ու դեպքերը: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ վիճարկվում են նախաքննության փուլում գտնվող քրեական գործի վերաբերյալ համապատասխան մարմինների եւ/կամ անձանց գործողությունները կամ որոշումները, ապա այս պարագայում նախաքննության գաղտնիությունը, իհարկե, պետք է պահպանել, եւ համապատասխան սույնեկտուներն իրավունք ունեն չներկայացնելու գործում առկա որոշ նյութեր: Ըեշտվել է նաև, որ օրենսդիրը նախատեսում է «...ոչ թե քրեական գործի ողջ նյութերի ներկայացումը դատարան, ...այլ միայն այն նյութերը, որոնք անմիջականորեն առնչվում են դատարան ներկայացված բողոքի առարկային»:

5. Սույն գործում առկա փաստարդերի ուսումնափրությունը ցույց է տալիս, որ դիմողի կողմից վիճարկվող իրավակարգավորումները, ըստ էության, առնչվում են սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.02.2012թ., ՀՀ վերաբննիշ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քրեական դատարանի 15.03.2012թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.05.2012թ. որոշումներին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «... դիմումները կարող են սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո»։ Իսկ, ինչպես արդեն վերը նշվել է, սույն գործով դիմումը սահմանադրական դատարան մուտքագրվել է 2013 թվականի նոյեմբերի 20-ին։ Հետեւարար, Լ. Պողոսյանը սույն գործով սահմանադրական դատարան վերոհիշյալ դատական ակտերով դիմելու համար օրենքով սահմանված ժամկետը չի պահպանել։

Ինչ վերաբերում է Լ. Պողոսյանի կողմից սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.01.2013թ., ՀՀ վերաբերնից քրեական դատարանի 15.03.2013թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.05.2013թ. որոշումներին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ դատական ակտերում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել։

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»։

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը։

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱԸ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «..., Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուրյեկտ չէ»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաբավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվելել բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», եթե անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, եթե վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:»

Դիմողի կողմից սահմանադրական դատարան ներկայացված դատական ակտերում սույն գործով վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի վերաբերյալ որեւէ ուղղակի հիշատակում չկա, կիրառում առկա չէ:

Բացի դրանից, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը ձեւականորեն վիճարկելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, եթե դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Լեւոն Պողոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 ապրիլի 2014 թվականի
ՍԴ-Ա-1144**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈԼԻՍԱՍԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱռՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՎՅԱՎՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՏՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

Քաղ. Երեւան

15 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուբյոնյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (գենուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Սովոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի մարտի 5-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Յ Ց.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է 2013թ. դեկտեմբերի 2-ին՝ Երևանում:

2. Համաձայնագրի նպատակներն են՝ կատարելագործել ՀՀ միջուկային անվտանգության ննթակառուցվածքները, ապահովել ՀՀ ատոմային էներգետիկայի օրյեկտներում միջուկային անվտանգության կայուն եւ բարձր մակարդակ, ստեղծել ՀՀ ատոմային էներգետիկայի օրյեկտներում հնարավոր ճառագայթային վտանգներից արդյունավետ պաշտպանության միջոցներ եւ պահպանել դրանք պատշաճ վիճակում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- համագործակցել Ռուսաստանի Դաշնության հետ Համաձայնագրի 3-րդ հոդվածում նախատեսված բնագավառներում,
- իրավասու մարմինների փոփոխության, դրանց անվանափոխման կամ գործառությների փոփոխման դեպքում Ռուսաստանի Դաշնությանն անհապաղ գրավոր տեղեկացնել այդպիսի փոփոխության մասին՝ դիվանագիտական ուղիներով,
- Համաձայնագրի իրականացման շրջանակներում ապահովել Հա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- մաճայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գործողությունների իրականացումը,
- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը, իրավասու մարմինները եւ/կամ լիազորված կազմակերպությունները, կախված թե որն է կիրառելի, ժամանակին տեղեկացնեն Ռուսաստանի Դաշնությանը Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համագործակցության բոլոր տեսակի արդյունքների մասին, որոնք որպես մտավոր սեփականություն ենթակա են իրավական պաշտպանության, եւ անհապաղ փոխհամագործակցել դրանց իրավական պաշտպանությունն իրականացնելու նպատակով,
 - Համաձայնագրի իրականացման շրջանակներում չիրականացնել այնպիսի տեղեկատվության փոխանցում, որն արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կամ դրա փոխանցումը չի համապատասխանում միջազգային պայմանագրերին,
 - Համաձայնագրի շրջանակներում փոխանցված կամ դրա իրականացման արդյունքում ստեղծված ամբողջ տեղեկատվությունը չբացահայտել եւ չփոխանցել երրորդ կողմին առանց Ռուսաստանի Դաշնության նախնական գրավոր համաձայնության,
 - Համաձայնագրի համաձայն Հայաստանի Հանրապետության ստացած միջուկային նյութերի, սարքավորումների, ոչ միջուկային հատուկ նյութերի եւ համապատասխան տեխնոլոգիաների, ինչպես նաև նրանց հիմքի վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային կամ ոչ միջուկային հատուկ նյութերի եւ սարքավորումների առնչությամբ կիրառել Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները:

4. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը կոչված է բարձրացնելու ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության արդյունավետությունը, նպաստել միջուկային անվտանգության մշակույթի բարձր մակարդակի պահպանմանը, պահպանել տեղեկատվական թափանցիկություն, ինչն իր հերթին կնպաստի ատոմային էներգետիկայի նկատմամբ հասարակության կողմից դրական վերաբերմունքի:

Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին, միտված են աջակցել միջուկային անվտանգության բարձր մակարդակի պահպանմանը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, Սահմանադրական դատարանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 ապրիլի 2014 թվականի
ՍԴ-1145**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ Ո-ՈՒՍԱՍԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԲՆՎՈՐԱԿԱՆ
ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՓՈՍՎՅԻՆ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

15 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դեկտեմբերի 2-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակա-փոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված՝ 05.03.2014թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագիրն («Համաձայնագիր») ստորագրել է 2013 թվականի դեկտեմբերի 2-ին՝ Երեւանում:

Համաձայնագիրն ստորագրելիս Կողմերը դեկավարվել են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին 1997 թվականի օգոստոսի 29-ի պայմանագրի դրույթներով:

2. Համաձայնագրի նպատակն է երկու Կողմերի միջև փոխադարձության հիման վրա իրականացնել համագործակցություն զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում:

3. Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից, 10 հոդվածներից և հավելվածից՝ Հրահանգ, որով սահմանվում է զինվորական սուրհանդակափոստային կապի ցանցով զինվորական նամակագրության առաքման կարգը:

Համաձայնագրով կարգավորվում են մի Կողմի պետության տարածքում տեղակայված զինվորական կազմավորումների համար մյուս

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

Կողմի պետության տարածքից զինվորական նամակագրության փոխանցման հետ կապված հարցերը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- Համաձայնագրի իրականացման նպատակով՝ վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում նշանակել լիազոր մարմին՝ դրա մասին Ռուսաստանի Դաշնությանը ծանուցելով դիվանագիտական ուղիներով,
 - Երաշխավորել, որպեսզի Ռուսաստանի Դաշնության գինվորական նամակագրության առաքումը Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված իր գինվորական կազմավորումների համար իրականացվի Ռուսաստանի Դաշնության գինվորական սուրհանդակափոստային կապի ցանցով,
 - ապահովել, որպեսզի գինվորական նամակագրությունն առաքելիս կիրառվեն Զինվորական սուրհանդակափոստային կապի ցանցով գինվորական նամակագրության առաքման կարգի մասին հրահանգով սահմանված կանոնները, որոնք հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը,
 - ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության սահմանային եւ մաքսային մարմինները՝ Հայաստանի Հանրապետության տարածք գինվորական նամակագրություն առաքվելիս, Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, ապահովեն սուրհանդակների (ցրիչների եւ թղթատարների)՝ պետական եւ մաքսային սահմանի անարգել հատումը եւ աջակցեն գինվորական նամակագրության օպերատիվ առաքման կազմակերպմանը եւ իրենց իրավասությունների շրջանակներում անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն նրանց ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ,
 - ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության տարածք գինվորական նամակագրություն առաքվելիս, Հայաստանի Հանրապետության պետական մարմինները եւ կազմակերպություններն իրականացնեն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործողությունները,
 - ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինները ոչ պակաս, քան տարին մեկ անգամ տեղեկատվու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյուն փոխանցեն Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններին՝ զինվորական նամակագրություն առաքող իրենց սուրհանդակների (ցրիչների և թղթատարների), այդ թվում՝ նրանց հաշվեցուցակային գենքի մասին,

- Համաձայնագրի կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության տիրապետման տակ առաքվող զինվորական նամակագրությունում պարունակվող Ռուսաստանի Դաշնության գաղտնի տեղեկատվության կրիչներ հայտնվելու կամ գաղտնի տեղեկատվություն հասանելի դառնալու դեպքում, այդպիսի տեղեկատվության հետ վարվել ու դրա պաշտպանությունն իրականացնել 2002 թվականի նոյեմբերի 5-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին համաձայնագրին համապատասխան,
- ապահովել, որպեսզի Համաձայնագրի իրականացման ընթացքում ստացած տեղեկատվությունը չօգտագործվի ի վեհական Ռուսաստանի Դաշնության ինքնիշխանության, անվտանգության, հասարակական կարգի կամ այլ էական շահերի,
- ապահովել, որպեսզի Համաձայնագրի իրականացման ընթացքում Ռուսաստանի Դաշնությունից ստացված տեղեկատվությունը չտրամադրվի որեւէ երրորդ կողմի, ներառյալ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

ՀԱՅՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 ապրիլի 2014 թվականի
ՍՊ-1146**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2013 թվականի Մայիսի 31-ին ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒՄ ՄԱՍԻՆ» 2011 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
18-ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՈՒՁՔԵԿԱՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԻՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

15 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Մ. Թոփուղյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի,
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Սելքոնյա-
նի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի
մայիսի 31-ին Մինսկում ստորագրված՝ «Ազատ առեւտրի գոտու մա-
սին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագիրը դրա կողմերի եւ

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուզբեկստանի Հանրապետության միջեւ կիրառելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի փետրվարի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Մելքոնյանի գրավոր բացատրությունը եւ լսելով նրա պարզաբանումները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Ազատ առեւտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) դրա Կողմերի եւ Ուզբեկստանի Հանրապետության միջեւ կիրառելու մասին արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2013 թվականի մայիսի 31-ին՝ Մինսկում:

2. Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսվում է, որ դրա ուժի մեջ մտնելու օրվանից, Արձանագրության 7-րդ հոդվածով նախատեսված կարգով, Պայմանագրի բոլոր դրույթները կիրառվում են Պայմանագրի կողմերի եւ Ուզբեկստանի Հանրապետության միջեւ հարաբերություններում՝ Արձանագրությանը նախատեսված պայմանների համաձայն:

3. Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Պայմանագրի կողմերի եւ Ուզբեկստանի Հանրապետության միջեւ Պայմանագրի 2-րդ եւ 3-րդ հոդվածների դրույթների կիրառման նպատակով.

- այն դեպքերում, երբ Պայմանագրի 2-րդ հոդվածի դրույթները հղվում են Պայմանագրի 1-ին հավելվածին, սույն Արձանագրության Կողմերի համար հասկացվում է Արձանագրությանը կից 1-ին հավելվածը,
- այն դեպքերում, երբ Պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները հղվում են Պայմանագրի 2-րդ հավելվածին, սույն Ար-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ձանագրության Կողմերի համար հասկացվում է Արձանագրությանը կից 2-րդ հավելվածը:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- Արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն Ուզբեկստանի Հանրապետության անդամակցելը կամ մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ կախված նրանից, թե այս նախապայմաններից որն ավելի շուտ կիրականանա. ա) Հայաստանի Հանրապետությունը չի կիրառի Պայմանագրի 19-րդ հոդվածի դրույթները Պայմանագրի 2-րդ հոդվածի 8-րդ կետի և 17-րդ հոդվածի կիրառման հանդեպ Հայաստանի Հանրապետության եւ Ուզբեկստանի Հանրապետության միջև ծագած վեճերի կարգավորման համար, բ) Հայաստանի Հանրապետությունը պահպանում է Պայմանագրի 9-րդ հոդվածով սահմանված՝ միջոցներ կիրառելու իրավունքը Ուզբեկստանի Հանրապետությունից ծագած ապրանքների նկատմամբ՝ պայմանավորված այն դեպքով, որ Ուզբեկստանի Հանրապետությունը կապված չէ Պայմանագրի 10-րդ հոդվածի դրույթներով, գ) Հայաստանի Հանրապետությունը կապված չէ Ուզբեկստանի Հանրապետության հանդեպ Պայմանագրի 2-րդ հոդվածի 8-րդ կետի, 5-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի առաջին պարբերության, 12-րդ հոդվածի, 14-րդ հոդվածի 1-ին կետի եւ 17-րդ հոդվածի դրույթներով, դ) Պայմանագրի դրույթների իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության եւ Ուզբեկստանի Հանրապետության միջեւ ծագած վիճելի հարցերը կլուծվեն երկկողմ բանակցությունների հիման վրա և այլն,
- ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցներն Արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների կատարման համար (հոդվ. 4, կետ 1),
- մինչեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն Ուզբեկստանի Հանրապետության անդամակցելը կամ մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ կախված նրանից, թե այս անսարքերից որն ավելի շուտ կիրականանա, սույն Արձանագրության մեկնաբանման և կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության եւ Ուզբեկստանի Հանրապետության միջեւ ծագած վեճերը լուծել խորհրդակցությունների միջոցով (հոդված 4, կետ 2), իսկ նշ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ված ամսաթվից հետո սույն Արձանագրության մեկնաբանման և կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Ուգրեկստանի Հանրապետության միջև ծագած վեճերը լուծել Պայմանագրի 19-րդ հոդվածով սահմանված կարգով (հոդվ. 4, կետ 3),
- անկախ Պայմանագրի 4-րդ հոդվածի դրույթներից՝ Հայաստանի Հանրապետության և Ուգրեկստանի Հանրապետության միջև առևտրում կիրառել 1993 թվականի սեպտեմբերի 24-ի՝ Ապրանքի ծագման երկրի որոշման կանոնները։ Փոխադարձ համաձայնությամբ կարող են կիրառվել այլ բազմակողմ կամ երկկողմ պայմանագրեր ապրանքի ծագման երկրի որոշման կանոնների վերաբերյալ (հոդվ. 2, կետ 3),
 - չկիրառել մաքսատուրքեր Ուգրեկստանի Հանրապետության մաքսային տարածքից ծագած ապրանքների ներմուծման նկատմամբ՝ հաշվի առնելով նաև այն, որ Պայմանագրի 1-ին հավելվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության կողմից ծխախոտի նկատմամբ կիրառվող մաքսատուրքի գործողության ժամկետն ավարտվել է 2014 թվականի հունվարի 1-ին (հավելված 1, բաժին I, կետ 1, մաս 2),
 - չկիրառել մաքսատուրքեր Ուգրեկստանի Հանրապետության մաքսային տարածքի համար նախատեսված ապրանքների արտահանման նկատմամբ (հավելված 1, բաժին II, կետ 1, մաս 1) և այլն։

5. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է ֆինանսական պարտավորություններ, քանի որ Արձանագրության 1-ին հավելվածի համաձայն չի կիրառելու մաքսատուրքեր Ուգրեկստանի Հանրապետության մաքսային տարածքի համար նախատեսված ապրանքների արտահանման և Ուգրեկստանի Հանրապետության մաքսային տարածքից ծագած ապրանքների ներմուծման նկատմամբ։

6. Արձանագրության 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսվում են դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Արձանագրության՝ ուժի մեջ մտնելու կարգը, իսկ 6-րդ հոդվածը սահմանում է, որ Արձանագրությանը վերապահումներ չեն բույլատրվում։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Արձանագրության մեջ հիշատակված «Ազատ առևտրի գոտու մասին» պայմանագիրը սահմանադրական դատարանի կողմից քննության է առնվել 2012 թվականի հուլիսի 13-ին եւ որոշում կայացվել դրանում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ (ՍԴՈ-1036): Հայաստանի Հանրապետության կողմից Պայմանագիրը վավերացվել է 2012 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ՀՀ Ազգային ժողովի ԱԺՈ-022-Ն որոշմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի մայիսի 31-ին Սինսկում ստորագրված՝ «Ազատ առևտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագիրը դրա կողմերի եւ Ուզբեկստանի Հանրապետության միջև կիրառելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 ապրիլի 2014 թվականի
ՍԴՈ-1147**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՄԼՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ 45.6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

18 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (գեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/՝ դիմով Գ. Սլոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

իրավիրված՝ ՀՀ կլրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Ա. Աշոտյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գետրգ Սլոյանի դիմումի հիման վրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

45.6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գետրգ Սլոյանի՝ 14.10.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, լսելով ՀՀ կրթության եւ զիտության նախարարի պաշտոնակատարի պարզաբանումները, հետազոտելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 13-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ին:

Օրենքի՝ «Փաստաբանական դպրոցի ունկնդրի կարգավիճակը» վերտառությամբ 45.6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Փաստաբանական դպրոցի ունկնդրի կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը, որն ունի իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան, բացառությամբ, եթե նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ»:

Վերոնշյալ դրույթը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասինե ՀՕ-339-Ն ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2011 թվականի դեկտեմբերի 8-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 19-ին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. 23.06.2012թ. դիմողը դիմում է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամ՝ ընդունելության քննություններին մասնակցելու նպատակով:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

17.07.2012թ. դիմողն ստացել է փաստաբանական դպրոցի ընդունելության հանձնաժողովի նախագահի 09.07.2012թ. որոշումը «Հավակնորդ Գեւորգ Սլոյանի կարգավիճակից զրկելու եւ քննությանը թույլ շտալու մասին»:

Դիմողը վերոնշյալ որոշումը բողոքարկել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի հոգարածուների խորհուրդ, որն իր՝ 26.07.2012թ. որոշմամբ դիմողի դիմում-բողոքը մերժել է:

Դիմոդը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդեմ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի՝ խմբելով դատարանին պարտավորեցնել պատասխանողին հաստատել դիմողի հավակնորդի իր կարգավիճակը եւ թույլ տալ մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննություններին:

Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱ.ԶԴ/2103/02/12 քաղաքացիական գործով 27.02.2013թ. կայացրած վճռով դիմոդի հայցը մերժվել է:

ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 29.05.2013թ. որոշմամբ մերժել է դիմոդի վերաբննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ բողնելով Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 31.07.2013թ. որոշմամբ վերադարձել է դիմոդի վճռաբեկ բողոքը:

3. Դիմոդը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 14.1, 32 եւ 39-րդ հոդվածներին:

Օրենքի վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմոդի փաստարկները հանգում են հետեւյալին. վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանների մի շարք դատական ակտեր՝ դիմոդը գտնում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդրի կարգավիճակ ձեռք բերելու համար սահմանելով Հայաստանի Հանրապետությունում սահմանված բարձրագույն կրթության որակավորման երեք աստիճաններից երկուսից մեկի /բակալավր կամ դիպլոմավորված մասնագետ/ առկայության պահանջը, առանց որեւէ օբյեկտիվ եւ ողջամիտ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

արդարացման սահմանել է խտրական վերաբերմունք իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունեցող անձանց նկատմամբ, եւ եթե նույնիսկ այդպիսի խտրականությունն ունի օրյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, ապա օրենքով կիրառվող միջոցները (տարբերակման, խտրականության) համարժեք չեն հետապնդվող նպատակներին, եւ կիրառվող միջոցի եւ հետապնդվող նպատակի միջեւ չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն:

Օրենքի վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են հետեւյալին. ներկայացնելով ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված՝ աշխատանքի ընտրության ազատության բովանդակության մեկնաբանությունը, դիմողը ներկայացնում է հետեւյալ տեսակնետը. «...դիմումատուն իր ունեցած որակավորմամբ համարվում է բարձրագույն իրավագիտական կրթություն ունեցող անձ, ինչը նշանակում է, որ նա ազատորեն կարող է ընտրել զբաղմունքի (գործունեության) տեսակ: Տվյալ պարագայում դիմումատուն, լինելով բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձ, ցանկանում է զբաղվել փաստաբանական գործունեությամբ, իսկ մասնագիտություն (դրա շրջանակներում՝ մասնագիտացում) եւ որոշակի տեսակի աշխատանքի ընտրության ազատությունը բացառապես տվյալ անձի իրավունքն է: Մինչդեռ դիմումատուի նկատմամբ կիրառված օրենքը սահմանափակում է նրա իրավունքը՝ զբաղվել փաստաբանական գործունեությամբ, հետեւապես՝ օրենքի այդ նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 32 հոդվածին, այնքանով որքանով արգելափակում է փաստաբանի աշխատանքն ազատորեն ընտրելու դիմումատուի իրավունքը»:

Միաժամանակ, վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նախորդ խմբագրությամբ տեքստը եւ արձանագրելով, որ ի տարբերություն գործող իրավակարգավորման՝ նախկինում փաստաբանի արտոնագիր ձեռք բերելու համար նախատեսված էր բարձրագույն իրավաբանական կրթության, ներառյալ՝ իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճանի առկայությունը, դիմողը գտնում է նաև, որ գործող իրավակարգավորման հետեւանքով խաթարվել են իր լեզիտիմ ակնկալիքներն այնքանով, որքանով ինքը, ստանալով բարձրագույն իրավաբանական կրթություն, ի թիվս այլնի, ակնկալել է նաև փաստաբանական գործունեության ազատ ընտրության հնարավորությունը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Օրենքի վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ դիմողի փաստարկները հանգում են հետևյալին. հղում կատարելով «Բարձրագույն եւ հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին, արձանագրելով, որ տվյալ օրենքի համաձայն՝ եւ՝ իրավագիտության բակալավրի, եւ՝ իրավագիտության մագիստրոսի, եւ՝ իրավագիտության դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք համարվում են բարձրագույն իրավագիտական կրթություն ունեցող անձինք, վկայակոչելով նաև նույն օրենքի՝ լրացուցիչ կրթության եւ դրա արդյունքում ավարտական փաստարուղթ ստանալու վերաբերյալ համապատասխան դրույթները՝ դիմողը հանգում է այն եզրակացությանը, որ վիճարկվող նորմերի գոյության հետեւանքով ինքը զրկվում է լրացուցիչ մասնագիտական կրթություն ստանալու եւ համապատասխան ավարտական փաստարուղթ ստանալու իր իրավունքներից, քանզի նրա նկատմամբ «Փաստարանության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմով դրսեւորվում է չիմնավորված խորականություն /տարբերակում, ինչը չունի ողջամիտ եւ արդարացի հիմնավորում:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ «Փաստարանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 14.1, 32 եւ 39-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ կրթական ծրագրի վերաբերյալ դրույթների, նույն հոդվածի 17.1, 20, 21 եւ 22-րդ կետերի, «Բարձրագույն եւ հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերի դրույթների վերլուծության հիման վրա ներկայացնում է այն չափանիշները, որոնք են տալիս միմյանցից տարանջատել 1-ին եւ 2-րդ մակարդակի բարձրագույն կրթության որակավորման համակարգերը, այն է՝ այն հենքը, որի հիման վրա պետք է շարունակվի բարձրագույն մասնագիտական կրթությունը, այն ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է անձն ստանա համապատասխան կրթական համակարգին համապատասխանող ուսուցում, եւ այն կրթական ծրագիրը, որի հիման վրա իրականացվում է համապատասխան մակարդակի կրթության կազմակերպումը:

Վերը նշված չափանիշների հիման վրա պատասխանողը գտնում է, որ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով ուսումնառությունը բարձրագույն կրթության տարբեր ձևերի հա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մատեքստում կարող է դիտվել որպես «հիմնական» կամ «բազային» մասնագիտական կրթություն, որի հիման վրա անձը հետագայում կարող է շարունակել իր կրթությունը մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար, որից հետո՝ նաև հետքուհական մասնագիտական կրթության ոլորտում:

Վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնք բացահայտում են փաստաբանական գործունեության բովանդակությունը, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում արտահայտված այն դրկտրինալ դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը երաշխավորում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, պատասխանատու է դրա պատշաճ որակի համար եւ այդ առումով պարտավոր է սահմանել փաստաբաններին ներկայացվող մասնագիտական եւ բարոյական պահանջներն ու չափանիշները, արձանագրելով, որ փաստաբանական դպրոցի կողմից չի իրականացվում սկզբնական մասնագիտական գիտելիքների փոխանցում եւ առաջնային մասնագիտական կրթության կազմակերպում, պատասխանող կրողմը բնական է համարում, որ փաստաբանական գործունեության իրականացման համար պահանջվի ոչ թե տվյալ ոլորտի բարձրագույն մասնագիտական կրթության առավել բարձր որակավորման աստիճանի առկայություն, օրինակ՝ մագիստրոսի կամ համապատասխան բնագավառի գիտությունների թեկնածուի կամ գիտությունների դրկտորի գիտական աստիճանի առկայություն, այլ համապատասխան ոլորտի բարձրագույն մասնագիտական «բազային» կրթության առկայություն:

Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ յուրաքանչյուր իրավունքի իրականացման համար օրենքով կարող են եւ պետք է սահմանված լինեն որոշակի նախադրյալներ, չափանիշներ եւ պահանջներ, եւ որ իրավունքները եւ ազատությունները չեն կարող լինել բացարձակ եւ անվերապահ: Այս առումով պատասխանող կրողմը գտնում է նաև, որ օրենքի վիճարկվող դրույթները չեն նախատեսում խորականություն, չեն խախտում անձի՝ կրթության եւ աշխատանքի պատ ընտրության իրավունքները:

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում հարկ է նախ բացահայտել ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական կրթություն պահանջող պաշտոնների հավակնորդներին ներկայացվող պահանջները:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգործի 115-րդ հոդվածի 4-րդ կետը, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ պարբերությունը եւ դրանք համադրելով «Փաստարանության մասին» ՀՀ օրենքի վիճարկող նորմի հետ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնների հավակնորդներին կամ որպես նոտար կամ փաստարան աշխատելու համար անձին ներկայացնում է միասնական կրթական չափանիշ, այն է՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճանի առկայությունը։ Դա ինքնանպատակ չէ, քանի որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ «բակալավր», «դիպլոմավորված մասնագետ», «մագիստրոս» հասկացությունների բովանդակությունը սահմանող՝ համապատասխանաբար 20, 21 եւ 22-րդ կետերի դրույթների, «Բարձրագույն եւ հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ «բարձրագույն մասնագիտական կրթություն» հասկացության բովանդակությունը սահմանող 3-րդ հոդվածի եւ բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ սահմանող 9-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ ցանկացած բուհական մասնագիտության շրջանակներում մագիստրատուրան հանդես է գալիս **որպես տվյալ մասնագիտության խորացման համակարգ**։ Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրված Բոլոնյան կրթական համակարգը թույլ է տալիս այլ մասնագիտություն ունեցող բակալավրին կամ դիպլոմավորված մասնագետին ընդունվել մեկ այլ մասնագիտության մագիստրատուրա։ Սակայն օրենքը նախատեսում է, որ տվյալ մասնագիտացման գծով ուսուցումը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն կրթություն։

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Բոլոնյան գործընթացի արդյունքում ներդրված կրեդիտային համակարգը որոշակի կրթական ծրագրով համապատասխան մասնագիտական որակավորում ստանալու համար պահանջում է համապատասխան քանակությամբ կրեդիտների կուտակում։ Ուստիեւ մագիստրոսի որակավորման աստիճանը պետք է համարել տվյալ մասնագիտությամբ առավել բարձր կրթական աստիճան միայն այն պարագայում, եթե առկա է այդ մաս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նագիտության համար նախատեսված անհրաժեշտ կրեդիտների կուտակումը: Միայն տվյալ պարագայում անձը կարող է համարվել համապատասխան կրթական ծրագրով **բվյալ մասնագիտությամբ երկրորդ սաղիճանի՝ մագիստրոսի որակավորման կրող:**

Սակայն այս հիմնախնդիրը հատակ կանոնակարգված չէ ՀՀ օրենսդրությամբ, ինչը լայն հայեցողական մոտեցումների եւ մարդկանց իրավունքների խախտման մեծ ռիսկ է բռվանդակում: Մասնավորապես՝ «Բարձրագույն եւ հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունից բխում է, որ «Բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագրերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն»: Մյուս կողմից՝ հիշյալ օրենքներում եւ տարբեր ենթաօրենսդրական ակտերում (հատկապես կրթության ընդհանուր չափորոշիչների հաստատման, կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու վերաբերյալ ՀՀ կառավարության՝ համապատասխանաբար 2001թ. հունվարի 16-ի թիվ 24, 2005թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2307-Ն, 2011թ. մարտի 31-ի թիվ 332-Ն որոշումներում, ինչպես նաև ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից ընդունված համապատասխան գերատեսչական ակտերում) առկա չէ հատակ մոտեցում կրթության տարբեր աստիճանների իրավական բռվանդակության, կրթության շարունականության, կրեդիտային կուտակային համակարգի եւ համարժեք որակավորման ներդաշնակման, այս ոլորտում միասնական չափորոշիչների հաստատման վերաբերյալ: Նման պայմաններում մագիստրոսական կրթություն իրականացնող տարբեր հաստատություններում յուրովի մեկնարաններով ՀՀ օրենսդրությունը՝ իրենց իսկ շահերից ու նպատակներից ելնելով, տարատեսակ կարգեր են սահմանել թե՝ մագիստրատորայի ընդունելության եւ թե՝ մագիստրոսների որակավորման հարցերում: Նման պայմաններում անձն ընդիուած պետական կրթական հաստատություններում նաև վճարովի կրթություն ստանալուց հետո անգամ տվյալ մասնագիտությամբ աշխատելու, ինչպես նաև հետագա մասնագիտական ուսուցման իրավունք չի ստանում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական անհստակությունները հանգեցրել են նրան, երբ, մի կողմից, անձն իրավաչափ ակնկալիքներով հանձնում է սահմանված քննությունները, ուսանում է մագիստրատորայում, ստանում է պետական նմուշի դիպլոմ, սակայն հե-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տագայում պարզվում է, որ տարրեր իրավական ակտերով նախատեսված սահմանափակումներով ինքը տվյալ մասնագիտությամբ աշխատել չի կարող, մյուս կողմից՝ նա մեկ կամ երկու տարում կարող է մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական ծրագրով այլ մասնագիտություն ձեռք բերել, ստանալ պետության կողմից սահմանված նմուշի համապատասխան դիվլոմ՝ առանց անհրաժեշտ կրեդիտների կուտակման: Նման վիճակը պահանջում է համակարգային ու հետեւողական օրենսդրական հստակեցումներ՝ առաջին հերթին «Կրթության մասին» եւ «Քարձրագույն եւ հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների մակարդակում՝ բարձրագույն մասնագիտական որակավորման աստիճանները ներդաշնակելով տվյալ մասնագիտության համար պետության կողմից սահմանված կրեդիտներին:

Սահմանադրական դատարանն ի գիտություն ընդունեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատար Ա. Աշոտյանի պարզաբնույն առ այն, որ մինչեւ 2014թ. վերջը վերոհիշյալ հարցերի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները կհատակեցվեն եւ կնախաձեռնվեն համապատասխան իրավական կարգավորումներ:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների եւ իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը: «Փաստարանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում՝ ընդիուած անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի (մագիստրոսի)՝ փաստարանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է բարձրագույն եւ հետքուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա՝ վերոշարադրյալ իրավական թերի ու համակարգային առումով անկատար լու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժումներով: Դրա հետեւանքով, մասնավորապես, պետական միասնական չափորոշիչների տեսանկյունից չի որոշակիացվել կապը բարձրագույն մասնագիտական համարժեք որակավորման ու դրա իրավական փաստը վկայող պետական նմուշի հավաստագրի (դիպլոմի) միջև։ Նման վիճակը, իր հերթին, հանգեցրել է նրան, որ, ինչպես նշվեց, վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է, չի համապատասխանում իրավունքների սահմանափակման համաշփորթյան սկզբունքին, ինչպես նաև չի ապահովում իրավունքի էռության անձեռնմխելության սահմանադրահրավական երաշխիքի իրացումը։

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**։

1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը՝ այս մասով ու մեկնարանությամբ, որով արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական համարժեք որակավորում ունեցող անձի փաստարանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 43-րդ (2-րդ մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 ապրիլի 2014 թվականի
ՍԴՈ-1148



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2011 թվականի Հոկտեմբերի 28-ին Մոսկվայում
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ
ԿԵՂԾԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ
ՆԵՐԿՎՅԱՑՆՈՂ ՆՄԱՆԱՏԻՊ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

13 մայիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հոկտեմբերի 28-ին Մոսկվայում ստորագրված՝ Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման եւ հանրային առողջության համար վտա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ազ Անրկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի մարտի 24-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի Անրկայացնոցի գրավոր բացատրությունը, հետազոտելով Կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
ՊԱՐԶԵՑ.

1. Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման եւ հանրային առողջության համար վտանգ Անրկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրման համար բացվել է 2011թ. հոկտեմբերի 28-ին: Կոնվենցիան Հայաստանի կողմից ստորագրվել է 2012թ. սեպտեմբերի 9-ին:

2. Կոնվենցիայի նպատակը հանրային առողջության դեմ ուղղված սպառնալիքների կանխարգելումն ու դրանց դեմ պայքարն է՝ Կոնվենցիայով նախատեսված արարքների քրեականացման, տուժողների պաշտպանության եւ այդ ոլորտում ազգային ու միջազգային համագործակցությունը խթանելու միջոցով: Ընդ որում՝ Կոնվենցիայի դրույթների կիրառումը, մասնավորապես՝ տուժողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջոցների օգտագործման հնարավորությունը, պետք է լինի ապահոված՝ բացառելով որեւէ խտրականություն (Կոնվենցիայի 2-րդ հոդված):

Ըստ Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված դրույթների՝ միջազգային իրավական կարգավորման են ենթակա այն հարաբերությունները, որոնք վերաբերում են բժշկական նշանակության արտադրանքին՝ անկախ մտավոր սեփականության իրավունքով պաշտպանված լինելու եւ այն հանգամանքից, թե՝ ոչ, ներառյալ՝ բժշկական սարքավորումների հետ օգտագործվող լրացուցիչ պարագաները, ինչպես նաև կենսարանական ակ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տիվությամբ օժտված նյութերը, օժանդակ նյութերը, քժշկական արտադրանքի արտադրության ընթացքում օգտագործման համար նախատեսված նյութերն ու տարրերը:

3. Կոնվենցիայի 4-րդ հոդվածում բացահայտված են մասնագիտական բնույթի մի շարք հասկացությունների բովանդակությունը և իրավակիրառական նշանակությունը:

4. Կոնվենցիայի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ իմնական պարտավորությունները.

ա) քրեական պատասխանատվություն սահմանել Կոնվենցիայում նկարագրված մի շարք այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են՝ կեղծ քժշկական արտադրանքի արտադրությունը, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի, մասերի, նյութերի և լրացուցիչ պարագաների կանխամտածված կեղծումը, տարածումը, մատակարարումը և մատակարարման առաջարկը, քժշկական արտադրանքներին վերաբերող փաստաթղթերի կեղծումը, ակտիվ նյութերի, օժանդակ նյութերի և լրացուցիչ պարագաների որակի և անվտանգության պահանջների կեղծումը,

բ) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ Կոնվենցիային համապատասխան նախատեսված հանցագործությունները պատժելի լինեն արդյունավետ, համաշափ պատժամիջոցներով, ներառյալ քրեական և ոչ քրեական դրամական պատժամիջոցներով, հաշվի առնելով դրանց ծանրությունը (ծանրացուցիչ հանգամանքները), իսկ պատժամիջոցները որոշելիս՝ հաշվի առնել նույն բնույթի հանցագործությունների մասով մյուս կողմի ընդունած վերջնական դատական ակտերը,

գ) ապահովել հետաքննության կամ քրեական հետապնդման մեկնարկը Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների համար՝ չայայմանավորելով դրանք բողոքի առկայությամբ,

դ) անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներով սահմանել իրավագորություն Կոնվենցիայով սահմանված ցանկացած հանցագործության մասով, եթե այն կատարվել է ՀՀ տարածքում կամ ՀՀ ազգային դրոշի ներքո նավարկող նավի վրա կամ ՀՀ ազգային օրենքներին համապատասխան գրանցված օդանավում կամ ՀՀ քաղաքացիներից մեկի կամ ՀՀ տարածքում առավելապես բնակվող անձի կողմից: Ընդուում, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 6-րդ կե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տում, չսախտելով միջազգային իրավունքի համընդհանուր նորմերը՝ Կոնվենցիան որեւէ կերպ չի բացառում որեւէ կողմի՝ իր ներպետական իրավունքին համապատասխան որեւէ քրեական իրավագործություն:

5. Կոնվենցիայի մի շաբք այլ հոդվածներով սահմանված են կողմերի ներպետական իրավունքին համապատասխան եւ Կոնվենցիայի նպատակներից բխող իրավասու մարմինների համագործակցության եւ տեղեկատվության փոխանակման սկզբունքներն ու ընդհանուր կարգը (17-րդ հոդված), բժշկական նշանակության արտադրանքի անվտանգ բաշխումն ապահովելու ընդհանուր միջոցները (18-րդ հոդված), տուժողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու առաջնահերթ միջոցները (19-րդ եւ 20-րդ հոդվածներ), Կոնվենցիայով նախատեսված՝ հանցավոր արարքներով հարուցված քրեական գործերով, ինչպես նաև այդպիսի արարքների կանխարգելման նպատակով միասնական ու փոխադարձության հիմքով միջազգային համագործակցության սկզբունքները (21-րդ եւ 22-րդ հոդվածներ), Կոնվենցիայի կատարումն ապահովելու նպատակով Եվրոպայի խորհրդի շրջանակներում կողմերի ներկայացուցության ապահովման ընդհանուր կարգն ու գործունեության (պատասխանատվության) ընդհանուր ուղղությունները (23-րդ, 24-րդ, 25-րդ հոդվածներ):

6. Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ քննության առարկա միջազգային պայմանագրի եւ վերջինիս նախարանում հիշատակված եւ Հայաստանի Հանրապետության կողմից դեռեւս չվավերացված կոնվենցիաների միջեւ իրավակարգավորման առումով բացակայում է ուղղակի կապը, իետեւարար՝ նաև սույն գործով սահմանադրականության խնդիր չի հարուցվում, սակայն հանրային առողջության համար վտանգ ներկայացնող հանցագործությունների դեմ միջազգային իրավական պայքարի տեսանկյունից դրանք համադասելի են ընդհանուր իրավակարգավորումների շրջանակում: Այդ կոնվենցիաներին միանալու իրավական գործընթացների նախաձեռնումը Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների լիազորությունն է՝ ՀՀ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ ստորագրող պետության, այդ թվում Եվրոպայի խորհրդի առնվազն երեք անդամ պետության կողմից՝ Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դրույթներին համապատասխան, իրենց համար Կոնվենցիայի պարտադիր լինելու վերաբերյալ իրենց համաձայնությունը տալու օրվանից հետո երեք ամիս ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սահմանադրախրավակական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի հոկտեմբերի 28-ին Մոսկվայում ստորագրված՝ Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման եւ հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎԱԾՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**13 մայիսի 2014 թվականի
ՍՊ.Օ-1149**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԵՐԿՐԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ, ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ, ԿԱԴԱՍՐԻ ԵՎ
ԵՐԿՐԻ ՀԵՌԱՀԱՐ ԽՈՐԱՉԱՓՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1992

ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՀԱՍՏԱՎՆԱԳՐՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՁԱՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

13 մայիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող, գելուցող), Կ. Բալայանի,
Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուղյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գլավոր ընթացակարգի շրջանակներում)` Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կաղաստի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Ֆ. Բաշոյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 30-ին Աշգարատում ստորագրված՝ «Երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար խորաչափման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» 1992 թվականի հոկտեմբերի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 15 ապրիլի 2014թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

«Երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար խորաչափման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» 1992 թվականի հոկտեմբերի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունն ստորագրվել է 2012թ. մայիսի 30-ին Աշխարադում՝ 1992 թվականի հոկտեմբերի 9-ին ստորագրված՝ Երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար խորաչափման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին համաձայնագրով հաստատված Կանոնադրությունը նոր խմբագրությամբ շարադրելու նպատակով:

Արձանագրությանը կից ներկայացված է Հավելված, որով նոր խմբագրությամբ շարադրված է Երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար խորաչափման միջամտական խորհրդի կանոնադրությունը:

Արձանագրությամբ եւ նոր խմբագրությամբ Կանոնադրությամբ որոշակի փոփոխությունների են ենթարկվում Երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար խորաչափման միջամ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տական խորհրդի կառուցվածքը, կազմը, գործառույթները, Խորհրդի անդամների իրավունքները եւ պարտականությունները սահմանող դրույթները:

Կանոնադրության նոր խմբագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ պարտավորությունը՝ որպես ընդունող պետություն ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինը կրի երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի եւ Երկրի հեռահար խորաչափման ոլորտում Խորհրդի նիստի անցկացման հետ կապված ֆինանսական ծախսերը (Կանոնադրություն, մաս IV, կետ 5):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

1. 2012 թվականի մայիսի 30-ին Աշգարատում ստորագրված՝ «Երկրաբաշխության, քարտեզագրության, կադաստրի եւ Երկրի հեռահար խորաչափման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» 1992 թվականի հոկտեմբերի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**13 մայիսի 2014 թվականի
ՍԴ-Ա-1150**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
7-ԻՆ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀՅՈՒՍԽ-ՀԱՐԱՎ» ճԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ»
ՖԻՆԱՆՍՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

27 մայիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (գեներալ), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2013 թվականի նոյեմբերի 7-ին եւ 2013 թվականի նոյեմբերի 18-ին ստորա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գրված՝ «Հայաստանի «Հյուսիսհարավ» ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի ապրիլի 29-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը եւ լսելով նրա պարզաբանումները, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի «Հյուսիսհարավ» ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագիրն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև 2013թ. նոյեմբերի 7-ին եւ 2013թ. նոյեմբերի 18-ին՝ Լյուքսեմբուրգում:

Պայմանագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 60.000.000 եվրո գումարի չափով վարկ՝ «Հայաստանի «Հյուսիսհարավ» ճանապարհային միջանցք» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու նպատակով: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել Երեւան-Բավրա միջանցքի հյուսիսային մասի մոտ 145 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ ապահովելով բոլոր տեխնիկական ենթակառուցվածքների արդիականացումը: Այն Հայաստանի Հյուսիսհարավ ճանապարհային միջանցքի բարեկարգման եւ վերակառուցման ընդհանուր ծրագրի բաղադրիչն է:

Պայմանագրի անբաժան մաս են կազմում Դեկլարատիվ դրույթները, Հավելվածը եւ թվով չորս Առդիրներ:

2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ իիմնական պարտավորությունները.

2.1. ոչ ուշ, քան վարկի հատկացման սահմանված ամսաթվից 15 օր առաջ Բանկին գրավոր տեղեկացնել Հատկացման հաշվի նասին (IBAN ծածկագրով կամ տեղական բանկային պրակտիկայում ընդունված համապատասխան ձեւաչափով).

2.2. առաջին տրանշի հատկացման համար սահմանված ամսա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թվից առաջ 5-րդ աշխատանքային օրը կամ դրանից շուտ Բանկին ներկայացնել՝

- ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված՝ անգերենով կազմված իրավական եզրակացություն (այն հիմնափորող կից փաստաթղթերով) Հայաստանի Հանրապետության կողմից ֆինանսական պայմանագրի պահանջները պատշաճ կերպով կատարելու եւ դրա վավերականության, կատարման ենթակա լինելու եւ պարտադիր բնույթ ունենալու մասին,
- հաստատում Պայմանագրի եւ դրա Ծրագրի իրականացման առնչվող բոլոր անհրաժեշտ քույլտվությունների ստացման մասին,
- հաստատում այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը կօգտվի այնպիսի խորհրդատունների ծառայություններից, որոնց որակավորումը, մասնագիտական փորձը եւ տեխնիկական առաջադրանքները համապատասխանում են Բանկի պահանջներին,
- Պայմանագրի 1.08 հոդվածին համապատասխան գնահատման վճարի ամբողջական կատարման հաստատում,
- գրավոր հաստատում Եվրոպական միության շրջակա միջավայրի մասին հրահանգի դրույթների կատարման մասին,
- կառուցապատման եւ բնապահպանական քույլտվությունները 1-ին եւ 2-րդ տրամադրելու համար,
- Հող ձեռք բերելու եւ վերաբնակեցնելու ծրագրի հաստատված պատճենը 2-րդ եւ 3-րդ տրամադրերից յուրաքանչյուրի համար,
- Անկախ վերատուգման պատճենը.

2.3. Երկրորդ տրամադրի հատկացման համար սահմանված ամսաթվից առաջ հինգերորդ աշխատանքային օրը կամ դրանից առաջ Բանկին ներկայացնել՝

- 3-րդ տրամադրի համար բնապահպանական եւ կառուցապատման քույլտվությունները,
- հաստատում, որ 3-րդ տրամադրի նախատեսված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն է տեղադրվել Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում,
- հաստատում, որ անհրաժեշտ բոլոր ապահովագրական վկայագրերը ձեռք են բերվել Պայմանագրի 6.05. հոդվածին համապատասխան։

2.4. բոլոր տրամադրերի հատկացման համար Բանկին ներկայացնել՝

- Պայմանագրի Դ առդիրում նշված ձեւին համապատասխան հավաստագիր,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Հատկացման ընդունումն ստորագրելու լիազորություն ունեցող անձի (անձանց՝ այդպիսի լիազորություն ունենալու փաստի հաստատումը, ինչպես նաև այդ անձի (անձանց) ստորագրությունների նմուշները,
- բացառությամբ առաջին տրանշի հատկացման դեպքի, հաստատումներ Եվրոպական միության Ֆինանսավորման համաձայնագրի եւ Իրականացման համաձայնագրի պատշաճ ձեւով կատարման մասին, Եվրոպական միության Ֆինանսավորման համաձայնագրին համապատասխան մասհանումների իրավունք ունենալու մասին, Եվրոպական միության Ֆինանսական համաձայնագրի եւ ՀՆԳ փաստաթղթերի շարունակական գործողության, վավերականության եւ կատարման ենթակա լինելու մասին,
- հաստատում Եվրոպական Հանձնաժողովի երաշխիքի վավերականության, պարտադիր ուժի եւ կատարման ենթակա լինելու մասին,
- հաստատում Ծրջանակային համաձայնագրի վավերականության, պարտադիր ուժի եւ կատարման ենթակա լինելու մասին,
- բույլտվության կամ որեւէ այլ փաստաթղթի, եզրակացության կամ հավաստիացման պատճենը՝ Բանկի կողմից այդ մասին ծանուցված լինելու դեպքում,
- Հաստատում, որ 1-ին տրանշի, 2-րդ տրանշի եւ 3-րդ տրանշի համար ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետությունը համաձայնեցրել է Ասիական զարգացման բանկի հետ՝ ըստ այդ բանկի Վարկային փաստաթղթերի,
- հաստատում Ծրագրի կապակցությամբ ձեռք բերվելիք հողատարածքների ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին,
- գնումների ծրագիրը.

2.5. վճարել հետաձգված հատկացման գումարի հիման վրա հաշվարկված հետաձգման փոխհատուցում՝ իր հարցման հիման վրա ցանկացած ընդունված տրանշի հատկացումը Բանկի կողմից մասամբ կամ ամբողջությամբ հետաձգելու դեպքում, ինչպես նաև սահմանված ամսաթվի եւ Հատկացման սահմանված ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագրի 1.04 հոդվածում սահմանված պայմաններից որեւէ մեկի չկատարման դեպքում.

2.6. կանխավճարի փոխհատուցման դեպքի կամ պարտավորությունները չկատարելու դեպքի առաջացման պատճառով Բանկի կողմից ընդունված տրանշի կասեցման դեպքում վճարել հետաձգման

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դիմաց փոխհատուցում, որը հաշվարկվում է կասեցված հատկացման գումարի հիման վրա.

2.7. փոխհատուցում կատարել բանկին պայմանագրի 4.02.Բ հոդվածով սահմանված կարգով, եթե չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույթով ընդունված տրանշը.

2.8. Բանկին վճարել կանխավճարի փոխհատուցում, եթե Բանկը չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույթով ընդունված տրանշը, կանխավճարի փոխհատուցման դեպքի կամ պայմանագրի 1.05.Բ հոդվածում նշված իրավիճակի պատճառով.

2.9. Բանկին փոխհատուցել Պայմանագրի 10.03. հոդվածով սահմանված կարգով, եթե Բանկը չեղյալ է հայտարարում Ընդունված տրանշը՝ պարտավորությունները չկատարելու դեպքի առաջացման պատճառով.

2.10. վճարել Բանկին 50.000 եվրո գնահատման վճար՝ Ծրագրի հետ կապված՝ Բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց.

2.11. վճարել եվրոյով յուրաքանչյուր տրանշի տոկոսները, հետվճարումները եւ այլ գանձումները՝ Պայմանագրով սահմանված պայմաններին, ժամկետներին եւ կարգին համապատասխան.

2.12. կատարել տոկոսի վճարումը մասերով Ֆիքսված տոկոսադրույթով տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված տոկոսադրույթով, կիսամյակային կտրվածքով՝ հատկացման առաջարկում նշված համապատասխան վճարման ամսաթվերին՝ սկսած տրանշի հատկացման օրվան հաջորդող առաջին վճարման ամսաթվից.

2.13. կատարել տոկոսի վճարումը մասերով լրոցցող տոկոսադրույթով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ լրոցցող տոկոսադրույթով, կիսամյակային կտրվածքով՝ հատկացման առաջարկում նշված համապատասխան վճարման ամսաթվերին՝ սկսած տրանշի հատկացման օրվան հաջորդող առաջին վճարման ամսաթվից.

2.14. Բանկի պահանջագրի համաձայն վճարել տոկոսներ՝ իր կողմից վճարվելիք ցանկացած ժամկետանց գումարի դիմաց՝ վճարման ենթակա ամսաթվից մինչեւ վճարման ամսաթվիը՝ Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույթների համաձայն.

2.15. մասերով հետ վճարել Բանկին յուրաքանչյուր տրանշը՝ հատկացման առաջարկում սահմանված վճարման ամսաթվերին եւ մարման աղյուսակի պայմաններին համապատասխան.

2.16. Բանկի կողմից սահմանված ամսաթվին վճարել Վարկի կանխավճար՝ կուտակված տոկոսի եւ սույն Պայմանագրով նախատեսված

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կուտակված կամ շվճարված բոլոր մյուս գումարների հետ միասին, եթե Բանկը չեղյալ է համարել Վարկի չհատկացված մասը՝ օրենքի փոփոխության դեպք առաջանալու կամ այդպիսի դեպք առաջանալու հավանականության հիմքով.

2.17. օգտագործել վարկի ներքո իր կողմից փոխառված գումարների միջոցները Ծրագրի կատարման նպատակով եւ երաշխավորել, որ Պայմանագրի 5-րդ Դեկլարատիվ դրույթում թվարկված՝ իրեն հասանելի մյուս միջոցները պահանջված չափով ծախսվում են Ծրագրի ֆինանսավորման նպատակով.

2.18. իրականացնել Ծրագիրը համաձայն Տեխնիկական նկարագրի.

2.19. ձեռք բերել միջոցներ՝ Ծրագրի հավելյալ ծախսերը վճարելու համար, եթե Ծրագրի հետ կապված ընդհանուր ծախսը գերազանցում է 5-րդ դեկլարատիվ դրույթում նշված գումարի չափը.

2.20. իրականացնել տեխնիկական սպասարկում, վերանորոգում, անցկացնել զննումներ եւ քարմացնել Ծրագրի մաս կազմող սեփականությունը.

2.21. ապահովագրել Ծրագրի մաս կազմող բոլոր աշխատանքները եւ սեփականությունն առաջնակարգ ապահովագրական ընկերությունների միջոցով.

2.22. իրականացնել Ծրագիրը՝ բնապահպանական իրավունքին համապատասխան, ձեռք բերել եւ պահպանել պահանջվող բնապահպանական հաստատումները Ծրագրի համար.

2.23. իրականացնել եւ կյանքի կոչել Ծրագիրը՝ Եվրոպական միության օրենքի համապատասխան չափանիշների համաձայն.

2.24. Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ մշակել ապահովման ծրագիր՝ վերջինիս մաս կազմող յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար.

2.25. ֆինանսավորել եւ համապատասխան միջոցներով ապահովել Հողի ձեռքբերման եւ վերաբնակեցման ծրագրերի իրականացումը.

2.26. նախատեսել Եվրոպական ներդրումային բանկի Վարկային հաշիվ՝ Բանկից վարկի հատկացումներ ստանալու նպատակով.

2.27. Բանկին տրամադրել առաջին երկու տարվա կտրվածքով գործողությունների մանրամասն ծրագիր՝ ոչ ուշ, քան մինչեւ 2014թ. դեկտեմբերի 31-ը.

2.28. ապահովել, որ իր վճարման պարտավորությունները պայմանագրի շրջանակներում դասակարգվեն բոլոր ներկա եւ ապագա՝ չափահովված եւ չստորակարգված այլ պարտավորությունների վճարման

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

իրավունքին հավասար առաջնահերթությամբ՝ իր ցանկացած պարտքային փաստաթղթի ներքո.

2.29. անմիջապես Բանկին տեղյակ պահել այլ վարկատուի հետ միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման պայմանագիր կնքելու մասին, որը պարունակում է վարկանիշի կորստի վերաբերյալ դրույթ կամ պարտավորությունների մարման հավասար առաջնահերթության կամ պարտավորությունների խաչաձեւ չկատարման համաձայնություն.

2.30. Բանկին տրամադրել տեղեկատվություն Ա.2. առդիրում նշված բովանդակությամբ, ձեւով եւ ժամանակին.

2.31. Բանկին տրամադրել տեղեկատվություն Ծրագրի կամ Ծրագրի համար ֆինանսավորման, գնումների, իրականացման, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ կամ լրացուցիչ փաստաբուղթ, որը Բանկը կարող է հիմնավոր կերպով պահանջել ողջամտ ժամանակահատվածում.

2.32. անհապաղ ներկայացնել Բանկին Ծրագրի ցանկացած էական փոփոխություն՝ հաստատելու համար.

2.33. Բանկին անհապաղ տեղեկացնել որեւէ երրորդ կողմի նախաձեռնած ցանկացած գործողության, բողոքի կամ առարկության վերաբերյալ, ցանկացած փաստի կամ դեպքի մասին, որոնք կարող են էական վնասել Ծրագրի կատարման ու իրականացման պայմանները, Ծրագրին առնչվող հանցագործությունների մասով իրական մեղադրանքի, դժգոհության կամ տեղեկատվության վերաբերյալ, բնապահպանական կիրառելի իրավունքին որեւէ անհամապատասխանության մասին, բնապահպանական հաստատման ցանկացած կասեցման, չեղյալ հայտարարման կամ փոփոխման մասին.

2.34. տարեկան կտրվածքով տրամադրել Բանկին իր տարեկան բյուջեի աղյուսակային ամփոփագիրը՝ տարեկան բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում.

2.35. Բանկի ողջամիտ պահանջի դեպքում քայլեր ձեռնարկել հետաքննելու եւ /կամ/ դադարեցնելու համար որեւէ ներառյալ կամ կասկածվող գործողություն, որն ունի Պայմանագրի 6.12. հոդվածում նկարագրված բնույթը.

2.36. Բանկին տեղեկացնել այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են որեւէ կորստի համար պատասխանատու անձանց գործողությունների հետեւանքով պատճառված վնասի հատուցում ստանալու ուղղությամբ.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2.37. օժանդակել ցանկացած հետաքննության, որը կարող է իրականացնել Բանկը նախորդ կետում նշված գործողությունների առնչությամբ.

2.38. վճարել բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ այլ ցանկացած բնույթի պարտադիր վճար, ներառյալ պետական տուրքը եւ գրանցման վճարը, որոնք ծագում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստարդի կատարումից կամ իրականացումից.

2.39. վճարել ամրող իիմնական գումարը, տոկոսը, փոխհատուցման գումարը եւ Պայմանագրի ներքո վճարման ենթակա մյուս գումարները՝ առանց որեւէ ազգային կամ տեղական հարկման նվազեցման.

2.40. կատարել բոլոր գանձումների եւ այլ ծախսերի վճարումը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման հետ կապված գանձումները, որոնք առաջանում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստարդի փոփոխման, լրացման, նախապատրաստման, կատարման, իրականացման եւ դադարեցման կամ Պայմանագրից կամ այլ համապատասխան փաստարդից հրաժարման, ինչպես նաև Վարկի համար որեւէ երաշխիքի փոփոխման, ստեղծման, կառավարման եւ իրականացման ուղղությամբ.

2.41. վճարել Բանկին ցանկացած գումար կամ ծախս, որոնք առաջել են կամ Բանկը կրել է որեւէ օրենքի կամ կանոնակարգի ներդրման կամ փոփոխության արդյունքում կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի փոփոխության արդյունքում.

2.42. հատուցել եւ Բանկին զերծ պահել որեւէ կորստից, որը հետեւանք է Հայաստանի Հանրապետության կողմից կատարված որեւէ վճարման կամ մասնակի մարման, որը տեղի է ունեցել Պայմանագրով հստակ սահմանված ձեւից տարրերվող ձեւով.

2.43. Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում անմիջապես հետ վճարել Վարկն ամրողությամբ կամ մասամբ՝ Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին, համաձայն Պայմանագրի 10.01.Ա հոդվածով սահմանված որույթների:

3. Անդրադառնալով ՀՀ ճանապարհային ցանցի բարելավմանն ու պահպանմանն ուղղված միջազգային ներդրումային ծրագրերի իրականացման եւ այդ բնագավառում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2009 թվականի սեպտեմբերի 15-ին եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2011 թվականի մայիսի 30-ին կնքված ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի եւ Տրանշ 2-ի իրականացման վարկային համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրագործման շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացի օրինականության ու արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թվականի հունիսի 1-ի թիվ 11/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվությունը։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Պայմանագրի կատարման շրջանակներում հիշյալ փաստաթղթում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բացահայտված թերությունների ու բացքումների բացառումը, ինչպես նաև արված եզրակացությունների ու առաջարկությունների կենսագործումը վերոհիշյալ Պայմանագրով ստանձնած ՀՀ պարտավորությունների արդյունավետ կատարման, հետեւարար՝ նաև ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սահմանադրական ինդիքների իրագործման երաշխիքներ են։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2013 թվականի նոյեմբերի 7-ին եւ 2013 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ «Հայաստանի «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**27 մայիսի 2014 թվականի
ՍՊԸ-1151**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԽԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁՅՆԱԳՐՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) (ՀՅՈՒՄԻՍ - ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄՎՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ 3)
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

27 մայիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Մ. Թոփուլյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազար-
յանի, Ա. Պետրոսյանի (գեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հան-
րապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հա-
յաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի
տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դոճքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՅԱՏՈՒՄՆԵՐԸ»

Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2014 թվականի մարտի 11-ին ստորագրված վարկային համաձայնագրում (Ընդհանուր գործողություններ) (Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի մայիսի 20-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային համաձայնագիրը (Ընդհանուր գործողություններ) (Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 3) ստորագրվել է 2014 թվականի մարտի 11-ին (այսուհետ՝ նաև Վարկային համաձայնագիր):

Վարկային համաձայնագիրն ստորագրվել է իհմք ընդունելով Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2009 թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված շրջանակային ֆինանսավորման համաձայնագիրը (Հայաստան ԲՖԳ Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր), որին Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 14-Ա որոշմամբ հավանություն է տրվել, եւ այն, ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2010 թվականի հունվարի 27-ի ՍԴՌ-860 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2010 թվականի փետրվարի 2-ի ԱԺՌ-186-Ն որոշմամբ:

2. Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է հարյուր միլիոն (100.000.000) ԱՄՆ դոլար գումարի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

շափով վարկ՝ Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրն (Ծրագիր) իրականացնելու նպատակով:

Ծրագրի նպատակն է Վարկառուի տարածքում զարգացնել ենթատարածաշրջանային եւ պետական ճանապարհատրանսպորտային ցանցը:

Վարկային համաձայնագրի համաձայն՝ Ծրագրի իրականացման արդյունքում

- կղյուրացվեն արդյունավետ ենթատարածաշրջանային տարանցիկ ճանապարհները.
- կմեծանա առեւտրի շրջանառությունը եւ մրցակցությունը.
- կնվազեն փոխադրումների ծախսերը.
- կմեծանա շուկաների, աշխատատեղերի եւ սոցիալական ծառայությունների հասանելիությունը.
- կբարելավվի կառավարումը:

Վարկային համաձայնագրի համաձայն՝ Ծրագրի կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

- Թալին եւ Լանջիկ քաղաքների միջեւ գտնվող մոտ 18.7 կմ երկարությամբ Թալին-Լանջիկ երկուդի ճանապարհային հատվածի վերակառուցում եւ այդ հատվածի ընդլայնում՝ վերածելով այն երկկողմանի երթեւեկության քառուդի մայրուղու.
- Երկարաժամկետ ճանապարհային ենթառորտային ծրագրի, ճանապարհային ակտիվների կառավարման եւ ճանապարհների սպասարկման կառավարման համակարգի նախապատրաստում եւ իրականացում.
- Հյուսիս - հարավ միջանցքի (304 կմ) Արտաշատից Քաջարան հատվածի տեխնիկատեսական ուսումնասիրության պատրաստում.
- Ծրագրի իրականացման աջակցություն եւ Ծրագրի հետագա տրանշի նախապատրաստում, այդ թվում՝ դրա հետ կապված տեխնիկատեսական ուսումնասիրության եւ ճարտարագիտական մանրամասն նախագծի պատրաստում:

Ծրագրի նախատեսվում է ավարտել մինչեւ 2017 թվականի հունիսի 30-ը:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) վճարել տոկոսագումար եւ պարտավճար՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով եւ չափով.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բ) ապահովել, որ վարկի միջոցներն ուղղվեն Ծրագրի ծախսերի ֆինանսավորմանը՝ Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան։

գ) վարել Ծրագրի համար առանձին հաշիվներ, Ծրագրի համար պատրաստել տարեկան ֆինանսական հաշվետվորթյուններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան, ամեն տարի ապահովել այդ ֆինանսական հաշվետվորթյունների առողջապահությունը, որը կիրականացվի առողջապահությունների կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց ներպետական համարժեք ստուգմանը համապատասխան, անկախ առողջապահությունների կողմից, որոնց որակավորումը, փորձառությունը եւ տեխնիկական առաջադրանքներն ընդունելի են ԱԶԲ-ի համար։

դ) չկնքել աշխատանքների կատարման որեւէ պայմանագիր, քանի դեռ Ծրագիրն իրականացնող գործակալությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմիններից չի ստացել վերջնական շրջակա միջավայրի ազդեցության գնահատում եւ վերջնական վերաբենակեցման պլանի վերջնական հաստատում, եւ շրջակա միջավայրի կառավարման պլանի համապատասխան դրույթները չի ներառել աշխատանքների իրականացման պայմանագրում։

ե) ապահովել, որ գնված բոլոր ապրանքները եւ ծառայությունները (այդ թվում, առանց սահմանափակումների, համակարգչային սարքավորումները, ծրագրերը եւ համակարգերը՝ լինեն դրանք առանձին գնված, թե ներառված լինեն գնված այլ ապրանքների եւ ծառայությունների մեջ) չխախտեն կամ չվնասեն արդյունաբերական կամ մտավոր սեփականության՝ որեւէ երրորդ կողմի իրավունքները կամ պահանջները։

զ) ապահովել, որ Ծրագրի ճանապարհի վերակառուցումն իրականացվի նախագծում, շինարարական մասնագրերում կամ մրցութային այլ փաստաթղթերում սահմանված տեխնիկական մասնագրերի համաձայն, ինչպես նաև շինարարության վերահսկողությունը, որակի հսկողությունը եւ պայմանագրերի կառավարումն իրականացվի միջազգային չափանիշներին համապատասխան։

է) ապահովել Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից Ծրագրի ճանապարհի երկայնքով մերենաները կշռելու կայանների տեղադրումը, որի միջոցով վերահսկվելու է գերծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կիրառել համապատասխան կանոններ ծանրաբեռնվածությունը սահմանափակելու նպատակով։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ը) ապահովել, որ համապատասխան պետական մարմինները խիստ վերահսկողություն իրականացնեն սահմանների վրա, ինչպես նաև մայրուղու (ճանապարհի) պարեկային ծառայություն իրականացնեն՝ կանխելով մարդկանց, վայրի բնության, կենդանների վտանգված տեսակների եւ անօրինական նյութերի թրաֆիկինգը.

թ) ապահովել կամ պահանջել, որ Ծրագիրն իրականացնող գործակալությունն ապահովի, որ հողերի ձեռքբերման ու վերաբնակեցման գործողություններն իրականացվեն համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հողերի ձեռքբերման եւ ոչ կամավոր վերաբնակեցման օրենսդրության, ոչ կամավոր վերաբնակեցման երաշխիքների, վերաբնակեցման շրջանակի, վերաբնակեցման պլանով նախատեսված՝ երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությամբ նախատեսված՝ ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունների, իսկ հողի ձեռքբերումն ու վերաբնակեցումն ավարտել նախքան շինարարական աշխատանքների մեջնարկը, եւ այս պահանջը, համապատասխանաբար, ամրագրել աշխատանքների պայմանագրում, ինչպես նաև տրամադրել համապատասխան ռեսուրսներ՝ ֆինանսավորելու համար վերաբնակեցման պլանին վերաբերող փոխհատուցումն ու ծախսերը.

ժ) ապահովել, որ Ծրագիրը որեւէ ազդեցություն չունենա տեղաբնակների վրա: Այն դեպքերում, եթե Ծրագիրը, այնուամենայնիվ, ունենում է նման ազդեցություն, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ Ծրագրով պահպանվեն Հայաստանի Հանրապետության գործող օրենքներն եւ կանոնակարգերը, ինչպես նաև ԱԶԲ-ի երաշխիքների վերաբերյալ քաղաքականության մասով հայտարարությունը (2009թ.):

4. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին եւ նապատակառությամբ են ստեղծելու արդյունավետ, անվտանգ եւ կենսակայուն Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, որը կապահովի Հայաստանի Հանրապետության կապը երկրի ներսում եւ միջազգային կապը՝ այլ երկրների հետ:

Միաժամանակ հարկ է նշել, որ սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը եւս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման եւ ծրագրի կառավարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2014 թվականի մարտի 11-ին ստորագրված վարկային համաձայնագրում (Ընդհանուր գործողություններ) (Հյուսիս - հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - ծրագիր 3) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**27 մայիսի 2014 թվականի
ՍՊԸ- 1152**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻԶ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄՈՒՆ ՎՐԱ՝ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
«ԱՆԿԱԽ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ»
ԴՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

3 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ա. Թեուանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 68 եւ 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական վերաբենիչ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 27.12.2013 թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացարությունները, հետազոտելով ՀՀ մաքսային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ մաքսային օրենսգիրքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 06.07.2000 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 09.08.2000 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.2001 թվականից: ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածը փոփոխվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-25-Ն օրենքով, որն ԱԺ կողմից ընդունվել է 22.12.2010 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 15.01.2011 թվականին, ուժի մեջ է մտել 05.02.2011 թվականին, եւ «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-125-Ն օրենքով, որն ԱԺ կողմից ընդունվել է 11.12.2013 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 27.12.2013 թվականին եւ ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին:

Դիմողի կողմից ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկվում է ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Մաքսային օրենսգիրք) 224-րդ հոդվածը՝ ԱԺ կողմից 22.12.2010 թվականին ընդունված՝ «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-25-Ն օրենքով նախատեսված խմբագրությամբ:

Մաքսային օրենսգրքի վիճարկվող խմբագրությամբ 224-րդ հոդվածը սահմանում է. «Անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ անկախ սեփականության պատկանելությունից, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարումից հետո՝ տասնինգօրյա ժամկետում»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատճենությունը հանգում է հետեւյալին. «Դիմո Գոլդ Մայնինգ Քամփինի» ՓԲԸ-ին մատակարարված արտադրանքը մաքսային պահեստում 2010 թվականի հունիսի 1-ին զննության է ենթարկվել, ինչի արդյունքում հայտնաբերվել է, որ արտադրանքը սխալ է հայտարարագրվել «Դիմո Գոլդ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչ՝ «ԱՍԲՍ» ՍՊԸ-ի տնօրեն Կամն Պետրոսյանի կողմից: Փաստի առքիվ Կամն Պետրոսյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշների ուժով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ ներմուծված արտադրանքը վերցվել եւ ի պահ է հանձնվել «Տրանս Ալյանս» ՍՊԸ-ի մաքսային պահեստ: ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության պետի 12.08.2010թ. որոշմամբ Կամն Պետրոսյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված մաքսային կանոնների խախտման մեջ եւ տուգանվել:

«Դին Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ն 09.02.2012 թվականին դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ վերցված արտադրանքի բացքողումը բույլատրելու խնդրանքով: Ի պատասխան հայցվորի դիմումի՝ գրությամբ վերջինիս հայտնվել է, որ «...տուգանքի զանձումն ապահովելու նպատակով վերցված ապրանքները՝ անկախ սեփականության պատկանելությունից, ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն, կարող են վերադարձվել տուգանքի վճարումից հետո՝ տասնինգօրյա ժամկետում»:

«Դին Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ն դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ վերոնշյալ վարչական ակտն անվավեր ճանաչելու եւ բերի բացքողումն ապահովելու պահանջով: ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի զանգատարկման հանձնաժողովի որոշմամբ բողոքը բողնվել է առանց քննության, իսկ բողոքարկված վարչական ակտը՝ անփոփոխ:

Վարչական դատարանը տվյալ գործով ներկայացված հայցը մերժել է՝ հայցի մերժման հիմքում դնելով Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածը:

Ներկայումս «ՀՀ վարչական վերաբենիչ դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/6421/05/12 վարչական գործն ըստ հայցի «Դանդի Փրիշս Սերալս Կապան» (հայցը հարուցելիս «Դին Գոլդ Մայնինգ Քամփնի») ՓԲ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 17.02.2012թ. թիվ 13-2/1350-12 վարչական ակտը՝ «Միաժամանակ հայտնում եմ, որ տուգանքի զանձումն ապահովելու նպատակով վերցված ապրանքներն անկախ սեփականության պատկանելությունից, ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն կարող են վերադարձվել տուգանքի վճարումից հետո՝ տասնինգօրյա ժամկետում մասով, անվավեր ճանաչելու եւ այդ մասը «Դին Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ին բույլատրել Մեծ Բրիտանիայից ՀՀ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Անդմուծված 8584կգ ընդհանուր քաշով FLEXADUX PLASTICS մեծքրիտանական ընկերության արտադրության օդափոխության խողովակների բացքողումը և մասով փոփոխելու պահանջների մասին»:

Վերաբննիչ վարչական դատարանը 23.12.2013 թվականին որոշել է կասեցնել տվյալ գործով վարույթը եւ դիմել ՀՀ սահմանադրական դատարան ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

3. Դիմողը գտնում է, որ քննության առարկա հոդվածի վիճարկվող՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 8 և 31-րդ հոդվածներին, քանի որ պարտավորություն չունեցող սեփականատիրոջը, սեփականությունից օգտվելու խոչընդոտներ ստեղծելով, սահմանադրախրավական առումով զրկում է սեփականությունից՝ առանց օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության մաքսային քաղաքականության հետապնդվող նպատակներին հասնելու հնարավորության։ Դիմողը գտնում է նաև, որ վիճարկվող դրույթն առաջացնում է իրավական անորոշություն։ Համաձայն դիմողի դիրքորոշման՝ ըստ մեղքի պատասխանատվության եւ անձնական պատասխանատվության սկզբունքների, ինչպես նաև վարչական տույժի նպատակի համատեքստում տուգանքը պետք է վճարվի բացառապես իրավախախտում կատարած անձի սեփականությունը համարվող գույքի հաշվին, մինչեւ վիճարկվող դրույթի ուժով, որպես տուգանքի վճարման, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարման ապահովում, սահմանափակվում է այն գույքի բացքողումը, որը Մաքսային օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով վերցվել է անգամ պարտավորություն չունեցող սուբյեկտներից։

Դիմողը նաև նշում է, որ տվյալ դեպքում սեփականության իրավունքին միջամտությունն օրենքով ՀՀ մաքսային քաղաքականության հետապնդվող նպատակներին հասնելու պիտանի եւ անիրաժեշտ միջոց չի կարող դիտարկվել, քանի որ սեփականության իրավունքին միջամտությամբ սեփականատիրոջից այդ նպատակներին հասնելու համար որեւէ վարքագիծ չի պահանջվում, իրավունքի սահմանափակման վերացման նախապայման է սահմանվել ինքնուրույն սուբյեկտ հանդիսացող երրորդ անձի կողմից տուգանքի վճարումը։

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննարկվող կանոնակարգումը «իր ձեւի մեջ սանկցիայի կատարումն ապահովող միջոց է, որի ուժով բացի զանցառու անձին անձնական պարասահանարկության ենթարկելուց, վերջինիս ապօրինի գործողությունների բացասական հետեւանքների ազդեցության է ենթարկվում այն ընկերությունը, որի կողմից լիազորված է տվյալ սուբյեկտը»: Ըստ պատասխանող կողմի՝ «...այն իրավիճակում, երբ ընկերության կողմից լիազորված անձի ապօրինի գործողությունների հետեւանքով իրավասում մարմինների կողմից նշանակվել է տուգանք, որը պետք է վճարի անձամբ իրավախախտում քոյլ տված անձը, իսկ ընկերությունը, կատարելով համապատասխան ձեւակերպումները, հնարավորություն կունենա անարգել իրականացնելու իր սեփականության իրավունքը, ապա վերջինս ոչ միայն չի նպաստի իր ներկայացուցչի կողմից տուգանքի վճարմանը, այդ պահին միջոցներ չի ձեռնարկի ապահովելու սանկցիայի կատարումը, այլև հետագայում միջոցներ չի ձեռնարկի նման իրավիճակներից խուսափելու համար: Այնինչ գործող իրավակարգավորումների պարագայում ներմուծող ընկերությունը, որպես սեփականատեր, շահագրգուված է ապահովելու տուգանքի վճարումը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող ապրանքը լիովին տնօրինելու իրավունքի վերականգնման համար»:

Անդրադառնալով սեփականության իրավունքից զրկման վերաբերյալ դիմողի ներկայացրած փաստարկներին՝ պատասխանող կողմը նշում է, որ «...սեփականատիրոջ իրավազորությունների իրականացման հնարավորությունների սահմանափակումը, այնուամենայնիվ պետք է տարբերակել իրավաբանորեն սեփականության իրավունքից զրկելուց, հաշվի առնելով դրանցից բխող իրավական հետեւանքների տարբերությունները...»:

5. Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող կանոնակարգումը դիտարկել դրա հետ համակարգային առումով փոխսկապակցված՝ Մաքսային օրենսգրքի վերաբերելի դրույթների հետ համադրության լույսի ներքո՝ բացահայտելու համար.

- որքանո՞վ է ապահովված վիճարկվող կանոնակարգման իրացման օրենսդրական կառուցակարգերի ամբողջականությունը,
- ինչո՞ւն է կայանում «սեփականության իրավունքից զրկում» եզրույթի սահմանադրախրավական բովանդակությունը,

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- որքանո՞վ է վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորումը ներառվում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով նախատեսված՝ «սեփականության իրավունքից զրկելու» ինստիտուտի բովանդակային շրջանակներում,
- արդյո՞ք վիճարկվող դրույթն առաջացնում է սեփականության իրավունքի սահմանափակում, արդյո՞ք այն հետապնդում է իրավաչափ նպատակ, համաչափ է եւ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում իրավաչափ նպատակին հասնելու համար,
- արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ սահմանված են անհրաժեշտ եւ բավարար երաշխիքներ սույն կանոնակարգման կիրառության շրջանակներում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման համար:

6. Վիճարկվող կանոնակարգման՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Մաքսային օրենսգրքի համապատասխան դրույթների հետ համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մաքսային վարույթի ընթացքում ապրանքներ վերցնելու ինստիտուտն ամրագրված է Մաքսային օրենսգրքի 38-րդ գլխում, որի 212-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մաքսային կանոնների խախտման անմիջական օրյեկտ համարվող ապրանքները, մաքսային սահմանով դրանց տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցները, ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպատակով պատրաստված գաղտնարանները, ինչպես նաև մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը ենթակա են վերցման:

Նշված կանոնակարգումից բխում է, որ օրենսդիրը լիազորել է մաքսային մարմնին վերցնել բացառապես հետեւյալ առարկաները՝

- մաքսային կանոնների խախտման անմիջական օրյեկտ համարվող ապրանքները,
- մաքսային սահմանով դրանց տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցները,
- ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպատակով պատրաստված գաղտնարանները,
- մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Նույն հոդվածով օրենսդիրը սահմանել է այդ առարկաները վերցնելու ընթացակարգը, որը տվյալ գործընթացում ապահովում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ պետական մարմնի առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Մաքսային օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ վերը նշված իրավակարգավորումը միակն է Մաքսային օրենսգրքում, որը սահմանում է այն առարկաների ցանկը, որոնք կարող են վերցվել մաքսային մարմնի կողմից, եւ դրանք վերցնելու կարգը: Որեւէ այլ նորմով սահմանված չէ, որ նույն կամ այլ ընթացակարգով կարող են վերցվել նաեւ այլ առարկաներ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքներ վերցնելու ինստիտուտը կոչված է ապահովելու մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթի արդյունավետությունը, որը հնարավորություն է ընձեռում մաքսային մարմնին հայտնաբերելու եւ կանխելու մաքսային իրավախախտումները: Իսկ վերջինն այն հանրային շահն է, որն արդարացնում է ապրանքներ տեղափոխող անձանց իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող կանոնակարգումն ամրագրված է «Վերցված ապրանքներ վերադարձնելու ժամկետը» վերտառությամբ հոդվածում, արձանագրում է, որ այս հոդվածի ենթադրյալ նպատակը պետք է ուղղված լիներ ապահովելու Մաքսային օրենսգրքով նախատեսված ապրանքների վերցման ինստիտուտի իրացման տրամաբանական զարգացումը՝ ապրանքները վերադարձնելու ժամկետներ սահմանելու միջոցով: Նման հետևությունը բխում է թե՛ վերաբերելի նորմերի համադրված վերլուծությունից, թե՛ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնակարգման պահանջից, համաձայն որի՝ «...հոդվածների վերագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը...»: Այսուղի հետևում է, որ քննարկվող հոդվածի շրջանակներում տեղ են գտել ոչ միայն Մաքսային օրենսգրքի 212-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման կիրառման արդյունքում ապրանքներ վերցնելու պարագայում դրանց վերադարձման ժամկետները, այլ նաեւ մեկ այլ ինստիտուտ՝ տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման համար ապրանքների վերցման ինստիտուտը, մինչդեռ որեւէ այլ նորմ Մաքսային օրենսգրքում չի կանոնակարգում ո՛չ մաքսային մարմնի համապատասխան

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

լիազորությունը, ոչ էլ այդ լիազորության իրացման ընթացակարգը: Արդյունքում՝ որոշակի կոնկրետ իրավահարաբերության կանոնակարգմանը նվիրված ընթացակարգային նորմ պարունակող հոդվածում տեղ է գտել մեկ այլ իրավահարաբերության կարգավորման ընթացակարգային նորմ՝ համապատասխան իրավահարաբերության նյութաիրավական կանոնակարգման բացակայության պայմաններում, ինչի հետեւանքով, մի կողմից, առաջ է եկել անձի սեփականության իրավունքին միջամտության իրավիճակ՝ առանց մաքսային մարմնի համապատասխան լիազորության, մյուս կողմից՝ այն իրացվում է անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության պայմաններում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում անձն իր սեփականության իրավունքին միջամտության գործընթացում զրկվում է իր իրավունքն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից:

7. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են պաշտպանվում է սեփականության իրավունքը»: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը շպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմանք...»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-903 որոշման մեջ սահմանել է, որ. «ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանքը».

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելու (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականագրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության եւ պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար...»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է նաև իրավական դիրքորոշումներ «սեփականությունից զրկելու» ինստիտուտի առնչությամբ (ՍԴ-Օ-903, ՍԴ-Օ-1073, ՍԴ-Օ-1142): Մասնավորապես, իր՝ 13 հուլիսի 2010 թվականի ՍԴ-Օ-903 որոշման մեջ սահմանադրական դատարանը, անդրադառնալով «սեփականությունից զրկելու» բնութագրիչ տարրերին, մասնավորապես արձանագրել է. «... սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետեւյալ հիմնական պարտադիր տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին եւ համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,
- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,
- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման եւ օգտագործման իրավազորությունների միաժամանակյա եւ լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման»:

Սեփականությունից զրկելու տեսանկյունից վիճարկվող դրույթի գնահատման համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթն ուսումնասիրել դրա հետ հանակարգային առումով փոխսկապակցված այլ դրույթների հետ, այդ թվում քացահայտել վիճարկվող դրույթը ներառող իրավանորմի հետապնդած նպատակը: Այսպես, Մաքսային օրենսգրքի՝ վիճարկվող խմբագրությամբ 224-րդ հոդվածը սահմանում է՝ անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ **անկախ սեփականության պատկանելությունից**, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարումից հետո՝ տասնինգօրյա ժամկետում: Վիճարկվող կանոնակարգման համատեքստում ապրանքների վերցման նպատակն ուղղա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կիորեն բխում է նոյն այդ կանոնակարգումից, մասնավորապես՝ ապրանքները վերցվում են տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով։ Նշված բնորոշումից ակնհայտ է, որ այն հանդես չի գալիս որպես պատասխանատվության միջոց, չնայած որ իրականացվում է անձի կամքին հակառակ՝ որպես հարկադիր գործողություն (այսինքն՝ պետության կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է), քանզի տարրեր են սեփականությունից զրկելու եւ քննարկվող ինստիտուտի նպատակները։ Սեփականությունից զրկելը դիտվում է որպես պատասխանատվության միջոց, որն առաջացնում է անբարենպաստ հետեւանքներ սեփականատեր անձի համար օրենքի պահանջներին չհամապատասխանող վարքագիծ դրսեւորելու պարագայում, իսկ խնդրո առարկա իրավակարգավորումը պատասխանատվության միջոց չէ, այլ միտված է ապահովելու անձի կողմից օրենքով նախատեսված պարտավորության կատարումը։ Բացի դրանից, այն հանգամանքը, որ ապրանքների վերցնումն իրականացվում է պարտավորության կատարումն ապահովելու նպատակով, վկայում է, որ պարտավորության կատարման արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումները վերանալու են, այսինքն՝ ապրանքների վերցման պարագայում երաշխավորվում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնումը, մինչդեռ սեփականությունից զրկելն անվերապահ է։ Այս մասին է վկայում նաև Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ «...կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարումից հետո՝ տասնինգօրյա ժամկետում»։

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքին՝ խնդրո առարկա միջամտությունն իր բնույթով չի հանդիսանում սեփականությունից զրկում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի իմաստով։

8. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1073 որոշմամբ, քննության առնելով անձի սեփականության իրավունքի սահմանափակման հիմնահարցը, նշել է, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը միանշանակ սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք։ Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Ծեշտադրվում է նաև, որ նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքն, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար: Եվրոպական դատարանը, իր հերթին, Սպորոնզը եւ Լոնրորն ընդդեմ Ըվելիայի գործով (CASE OF SPORRONG AND LÖNNROTH v. SWEDEN, Application no. 7151/75; 7152/75) սահմանել է, որ «...արձանագրության առաջին հոդվածը բաղկացած է երեք կանոններից՝ առաջին կանոնը, որը ընդհանուր բնույթի է, նախատեսում է սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, դա նշված է առաջին պարբերության առաջին նախադասությունում: Երկրորդ կանոնը նախատեսում է սեփականությունից զրկելը եւ որոշակի պայմաններ վերջինիս համար: Երրորդը ամրագրում է պետության իրավունքը վերահսկելու սեփականության օգտագործումը ընդհանուր հետաքրքրությանը համապատասխան, այնպիսի օրենքներ կիրառելու միջոցով, որոնք անհրաժեշտ են երկրորդ պարբերության մեջ նշված նպատակների համար»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև վիճարկող դրույթի ուժով սեփականության զրկում տեղի չի ունենում, այնուհանդերձ, ի հայտ է զալիս անձի սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագորություններից օգտվելու հնարավորությունների բացակայություն, քանի որ ակնհայտ է, որ վերցման ենթարկված գույքը, որոշակի ժամանակահատվածում որպես սեփականություն հանդիսացող օբյեկտ, սեփականատիրոջ կողմից տնօրինվել, օգտագործվել կամ կառավարվել չի կարող: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել քննության առարկա կանոնակարգումը ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքը շրջակա միջավայրի պաշտպանության, այլ անձանց, հանրության, պետության իրավունքների եւ օրինական շահերի հետ ներդաշնակ իրականացնելու սահմանադրաբավական սկզբունքի տրամաբանության լույսի ներքո: Ինչպես նշվեց, վիճարկող կանոնակարգումը նպատակ է հետապնդում ապահովել մաքսային իրավահարաբերությունների շրջանակներում տուգանքի, մաքսային վճարների գանձումը, այսինքն՝ կոչված է ապահովելու համապատասխանարար տուգանք վճարելու, մաքսային վճար կատարելու հա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մար պատասխանատու անձի կողմից իր պարտավորության կատարումը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴ-1073 որոշմամբ, քննության առնելով հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կիրառվող արգելանքի ինստիտուտը, որը կոչված է ապահովելու անձի կողմից իր հարկային պարտավորությունների կատարումը, որոշակի իրավապայմանների առկայության պայմաններում իրավաչափ է համարել սեփականության իրավունքի սահմանափակում՝ ի կատարումն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված՝ անձի պարտավորության: Այդուհանդերձ, սույն գործով վիճարկվող դրույթը, նախատեսելով սեփականության իրավունքի սահմանափակում՝ առանց վերոնշյալ որոշման մեջ արձանագրված իրավապայմանների, միաժամանակ տարբերակում չի դնում իրավախախտում կատարած սուրբեկտի եւ այլ սուրբեկտների սեփականության հարցում: Եթե ՍԴ-1073 որոշմամբ քննության առնված սեփականության իրավունքի սահմանափակումն իրացվում է ի ապահովումն անձի կողմից իր պարտավորությունների կատարման՝ իր իսկ գույքի հաշվին, այն էլ ոչ ամբողջ, այլ միայն չկատարված պարտավորության չափով, ապա Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման պայմաններում ոչ միշտ է, որ անձի մեղքով օրենքի խախտման հետեւանքով իր սեփականության իրավունքն է սահմանափակվում՝ որպես երաշխիք ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների կատարման: Քննարկվող կանոնակարգման պայմաններում հնարավոր է երկու իրավիճակ՝ առաջինը, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, երկրորդ դեպքում՝ այլ անձի կամ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքը: Մասնավորապես, նման իրավիճակ է առաջանում, երբ ապրանք տեղափոխողն օգտվում է մաքսային բրոքերի (միջնորդ) ծառայություններից՝ քաղաքացիական պարտավորությունների շրջանակներում: Եթե առաջին դեպքում սեփականության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ համարվել, քանզի անձն իր իսկ մեղքով թույլ տրված խախտման համար ենթարկվում է վարչական տույժի, եւ որպես դրա կատարման երաշխիք՝ իր գույքի նկատմամբ նրա սեփականության իրավունքն է սահմանափակվում, ապա երկրորդ դեպքում անձը կրում է բացասական հետեւանքներ՝ անկախ իր մեղքից, մեկ այլ անձի վարքագծի (գործողությունների կամ անգործության)՝ այսինքն, վերջինիս կողմից ստանձնված քաղաքացիական պարտականությունների ոչ պատշաճ կատարման պատճառով:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴ-Ծ-920 որոշման մեջ արձանագրել է, որ «Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9, 32 և 279-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախումներում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ։ Այդ սկզբունքն է ընկած նաև մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության հիմքում։ Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական եւ պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության։ Հետեւաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուրյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը։ Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախումնան համար...»։

Զարգացնելով ՍԴ-Ծ-920 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, քանի որ պատասխանատվության սուրյեկտ է համարվում անձը, ով թույլ է տվել օրենքի խախտումը, հետեւաբեն՝ պարտավորության կատարումն ապահովելու միջոցները պետք է իրացվեն բացառապես իրավախախումն թույլ տված եւ պատասխանատվության ենթարկված անձի գույքի հաշվին։ Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ եթե ապրանքների վերցման նպատակը տուգանքի վճարման, մաքսային վճարների կատարման պարտավորության ապահովումն է, ապա այն չի կարող իրացվել՝ անկախ վերցման ենթակա ապրանքի սեփականության պատկանելությունից, քանի որ իրավախախուր համապատասխան պարտավորությունը պատշաճ կատարելու շահագրգուժություն կարող է ունենալ իր սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու եւ սեփական գույքի հանդեպ բացառական հետեւանքներ կրելուց խուսափելու հեռանկարի պարագայում, մինչդեռ վիճարկվող կանոնակարգումը չի ապահովում պարտավորության կատարման շահագրգուժության եւ սեփականության իրավունքի սահմանափակման՝

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որպես նպատակի եւ միջոցի հարաբերակցության տրամարանական փոխայմանավորվածությունը: Ավելին, հիշյալ իրավակարգավորմանք գործնականում խախտվում են իրավական պատասխանատվության ինստիտուտի կիրառման հանրային-իրավական սկզբունքները (անհատականացում, մեղքի առկայություն եւ այլն), որի արդյունքում այն չի կարող արդյունավետորեն ծառայել դրանցով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ անձի ոչ իրավաչափ վարքագծով (գործողությունով կամ անգործությամբ) պայմանավորված անձի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ապահովելու համար խախտումը բույլ տված անձի կողմից իր պարտավորության կատարումը, հանդես է գալիս որպես ոչ իրավաչափ միջամտություն իրավախսառում բույլ չտված անձի սեփականության իրավունքի նկատմամբ եւ աղերսներ չունի մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի բնականոն ընթացքի երաշխավորման անհրաժեշտության հետ:

9. Անդրադառնալով վիճարկվող կանոնակարգման կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների հիմնահարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մաքսային օրենսգրքում բացակայում են այն երաշխիքները, որոնց համարության լույսի ներքո է բացառապես ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչել սեփականության իրավունքի իրացման հնարավորության սահմանափակումը՝ որպես ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորության իրացման ապահովմանն ուղղված՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրա-իրավական սկզբունքի դրսեւորման ձև: ՍԴՈ-1073 որոշմամբ մատնանշված երաշխիքներն առավելապես հանգում են նրան, որ պարտավորությունների կատարումն ապահովելու համար գույքի նկատմամբ արգելանք/վերցնում կարող է կիրառվել պարտավորությունների կատարումն այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորություններն սպառելուց հետո: Մինչդեռ սույն գործով քննության առարկա իրավիճակում գույքը վերցվում է անմիջապես՝ ամկախ սեփականության պատկանելությունից, հետեւաբար՝ ոչ իրավաչափ եղանակով: Բացի դրանից, Մաքսային օրենսգրքում չկան գույքի վերցման այլընտրանքային կառուցակարգեր, մինչդեռ հարկային իրավահարաբերությունները կազմակերպվեն:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյունների շրջանակներում արգելանքի ինստիտուտի սահմանադրականության հարցը քննելիս սահմանադրական դատարանն այդպիսիների առկայությունը դիտարկել է որպես գործուն կառուցակարգ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու հարցում։ Մաքսային օրենսգրքում բացակայում է նաև գույքի այն տեսակների ցանկը, որոնց պահումն արգելվում է։ Մինչեւ նման կանոնակարգման առկայությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքում եւս ՍԴ-1073 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է որպես արգելանքի իրացման ընթացքում կարեւոր երաշխիք։

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ Մաքսային օրենսգրքի վիճարկվող դրույթից պարզ չի դառնում, թե տուգանք նշանակելու պարագայում գույքի սեփականատերը կարող է վճարել տուգանքն իրավախսության կատարած սուբյեկտի փոխարեն, թե՝ ոչ։ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման հնարավորության բացակայության պայմաններում մեծանում է անձի իրավունքների խախտման ռիսկը, քանի որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերացումը պայմանավորվում է մեկ այլ անձի վարքագծով, եւ գույքի սեփականատերը իրավախսության կատարած սուբյեկտի կողմից երկարատես ժամանակահատվածում տուգանքը չվճարելու պարագայում կարող է կրել լուրջ ֆինանսական եւ այլ կորուստներ։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեեւ սեփականության իրավունքի իրացումը կարող է ժամանակավորապես կասեցվել տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման նպատակով, սակայն այս հիմքով սեփականության իրավունքին միջամտության օրենսդրական կանոնակարգումը պետք է հնարավորություն ընձեռի անձին պաշտպանելու իր իրավունքը։ Անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի եւ մաքսային վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար եւ անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրավասում մարմնի լիազորությունը եւ այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակիորեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտացոլված՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը։

Սահմանադրական դատարանը հանգում է հետեւյալին։

Աախ!՝ Վեճի առարկա իրավակարգավորումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի /մասնավորապես՝ 41-րդ հոդվածի 1-ին մաս, 36-րդ հոդվածի 4-րդ մաս/ պահանջներին,

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երկրորդ՝ Մաքսային օրենսգրքով սահմանված չէ մաքսային տուգանքների եւ պարտավորությունների կատարման նպատակով ապրանքներ վերցնելու ընթացակարգ, իսկ 224-րդ հոդվածում «վերցնել» եզրույթը, ի տարրերություն 212-րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օրենկուների առնչությամբ գործողության, վերաբերում է ոչ թե մաքսային իրավախախտումների բացահայտմանն ու կանխարգելմանը, այլ տուգանքի, մաքսային վճարների եւ պարտավորությունների կատարման ապահովմանը,

Երրորդ՝ վեճի առարկա իրավադրույթի կիրառման պայմաններում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերցված ապրանքը հետազյում չի կարող դառնալ բռնագանձման առարկա, որի պարագայում այդ ապրանքը վերցնելը չի կարող նպատակ ունենալ ապահովելու մաքսային տուգանքների եւ վճարների կատարման պարտականությունը,

Չորրորդ՝ վիճարկվող դրույթն այնքանով, որքանով տարբերակում չի դնում տարբեր սեփականատերների գույքի միջեւ եւ առաջացնում է անբարենպաստ իրավական հետեւանքներ այն սուբյեկտների համար, որոնց վարքագծով պայմանավորված չէ իրավախախտման փաստը, հանգեցնում է վերջիններիս սեփականության իրավունքի իրացման ոչ իրավաչափ միջամտության:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ եւ 31-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**3 հունիսի 2014 թվականի
ՍՊԸ-1153**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ «ԶԲՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԵՏԻ 1996

ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՆՔԵՐԻ 4-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՅՍՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 604 ՈՐՈՇՄԱՆ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

10 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
իրավական վերլուծության վարչության պետի տեղակալ Ա. Մարգար-
յանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ վարչապետի
պաշտոնական ներկայացուցիչ, ՀՀ պաշտպանության նախարար
Ա. Օհանյանի, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ
Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության
խորհրդատու Ա. Թերանյանի,

ՀԱՅՍՏԱՆԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալն գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2014 թվականի հունվարի 30-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, որոշվել է գործը քննել գրավոր ընթացակարգով՝ որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավելով «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի մասով՝ նշված օրենքն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին, իսկ ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով՝ ՀՀ վարչապետին:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքը, ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 604 որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՕ-380-Ն օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հուլիսի 3-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հուլիսի 18-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 20-ին:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 24.12.2004թ. ՀՕ-59-Ն օրենքով փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել օրենքի 16-րդ հոդվածում, որոնք, սակայն, չեն վերաբերել օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությանը:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը սահմանում է.

«Զինվորական պաշտոնը համարվում է հավասար, եթե նախկին եւ նոր հաստիքային պաշտոններին համապատասխանում են նույն զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը»:

ՀՀ վարչապետի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշումն (այսուհետ՝ Որոշում) ընդունվել է 1996 թվականի նոյեմբերի 4-ին եւ ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 1-ից:

Որոշման թիվ 1 հավելվածով սահմանվում են ՀՀ բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, որտեղ նաև առանձին սանդղակներում նախատեսված են ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության նախարարության եւ արտակարգ իրավիճակների վարչության զինվորական միավորումների եւ ստորաբաժանումների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, իսկ թիվ 2 հավելվածով սահմանվում են զինծառայողների զինվորական կոչումների դրույքաչափերը, ՀՀ դատախազության, արդարադատության նախարարության, դատավորների, պետական նոտարիատների եւ հարկային տեսչության աշխատողներին շնորհված դասային եւ հատուկ կոչումների, որակավորման դասերի համար հավելումները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեպետ դիմողը վիճարկում է Որոշումն ամբողջությամբ, այդուհանդերձ, դիմումում բերվող հիմնավորումները վերաբերում են բացառապես Որոշման թիվ 1 հավելվածով սահմանված՝ ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատի աշխատողների եւ ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության նախարարության եւ արտակարգ իրավիճակների վարչության զինվորական միավորումների ու ստորաբաժանումների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սանդղակներում հնարավոր օրենսդրական բացի սահմանադրականությանը:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, դիմուլվ ՀՀ սահմանադրական դատարան, գտնում է, որ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը եւ ՀՀ վարչապետի՝ վեճի առարկա որոշումը հակասում են ՀՀ Սահմանադրության 37-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին:

Վիճարկվող նորմատիվ ակտերի առնչությամբ դիմողի դիրքորոշումը հանգում է հետևյալին. ԱՊՀ մասնակից պետությունների կողմից 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված «Զինվորականների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաքոչակային ապահովության եւ պետական ապահովագրության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1-ին հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունների կողմից սահմանվող զինծառայողների եւ նրանց ընտանիքների կենսաքոչակային ապահովության մակարդակը չի կարող ԽՍՀՄ-ի կողմից նախկինում սահմանված օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերի համեմատ ավելի ցածր մակարդակի լինել:

Դիմողը Համաձայնագրի 1-ին հոդվածի եւ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում եզրահանգում է, որ Համաձայնագրի պահանջների պատշաճ կատարման համար հարկավոր է, որ այն հստակ եւ կանխատեսելի արտացոլում ստանա ՀՀ օրենսդրության մեջ, օրինակ՝ նախատեսելով ԽՍՀՄ ժամանակաշրջանում գործող զինվորական պաշտոնների սպառիչ եւ/կամ համապարփակ ցանկ։

Դիմողը միաժամանակ գտնում է, որ ՀՀ օրենսդրության ներկայիս կարգավորումները համահունչ չեն տվյալ Համաձայնագրով սահմանված կարգին եւ խնդրահարույց են նաեւ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջների համատեքստում։

Իր տեսակետը հիմնավորելու համար դիմողն իրավացիորեն արձանագրում է, որ «...օրենքով եւ իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որեւէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք»։

Անդրադանալով «Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ եւ 24-րդ հոդվածներին՝ դիմողը գտնում է, որ զինծառայողին կենսաքոչակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաշափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը։ Սակայն տվյալ դեպքում

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գործընթացի կարգավորման հիմքը ՀՀ վարչապետի թիվ 604 որոշումն է եւ ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 6 հրամանը, այլ ոչ թե ՀՀ կառավարության որոշումը:

Դիմողը նաեւ անդրադարձ է կատարում ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված հավելված 16-ին, նշելով, որ հավելվածում ներառված չեն զինվորական այն բոլոր պաշտոնները, որոնք եղել են նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանում: Դիմողի կարծիքով, դրանով իսկ ՀՀ կառավարությունը չի կատարել թե՝ ՀՀ օրենսդրությամբ եւ թե՝ Համաձայնագրով իր վրա դրված պարտականությունը:

Դիմոդը գտնում է նաեւ, որ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված պայմանը չի կարող լիարժեք պահպանվել, եթե համաձայն օրենքի վիճարկվող դրույթի՝ նախկին եւ նոր հաստիքային պաշտոնների համապատասխանության համար անհրաժեշտ է միայն զինվորական կոչման ու պաշտոնային դրույթի համբեկնումը: Միաժամանակ, դիմոդը գտնում է, որ զինվորական կենսարդարների նշանակելիս պետք է հաշվի առնվի նաեւ զինծառայողի զբաղեցրած պաշտոնը:

3. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի մասով՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը սույն գործով վիճարկվող օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության առնչությամբ գտնում է, որ «...օրենքի վիճարկվող նորմն ուղղակիորեն չի մասնակցում զինծառայողներին կենսարդարների հետ կապված հարաբերությունների կարգավորմանը», ինչպես նաեւ շեշտում է, որ «...զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսարդարներին իրավունքների հետ կապված հարաբերությունները վիճարկվող նորմը պարունակող օրենքի կարգավորման առարկայուն ընդգրկված չեն»: Ըստ պատասխանողի՝ նշված հարաբերությունները կարգավորվում են առավելապես «Պետական կենսարդարների մասին» ՀՀ օրենքով, որի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են զինվորական կենսարդարների տեսակները, ինչպես նաև որոշակի կարգավորում է նախատեսված նաեւ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

Պատասխանող կողմը՝ ՀՀ Ազգային ժողովը, գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմն այն ձեւակերպմամբ, որն այժմ առկա է, որեւէ հակասության մեջ չի մտնում ՀՀ Սահմանադրության դրույթների հետ, քանի որ այն անուղղակի կերպով կոչված է ապահովելու օրենքով նախատեսված դեպքերում սոցիալական ապահովության՝ յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի իրականացման որոշակի նախադրյալներ:

4.ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ վարչապետի պաշտոնական ներկայացուցիչը սույն գործով վիճարկվող նորմատիվ ակտերի դրույքների առնչությամբ առարկելով դիմողի այն մեկնարանություններին, համաձայն որոնց՝ Որոշմամբ են սահմանվել կենսաքողակառուների սոցիալական ապահովության ծավալները կամ ձեւերը, գտնում է, որ դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ ժամանակահատվածում ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության ծավալը եւ ձեւերը սահմանված են եղել օրենքներով («Քաղաքացիների պետական կենսաքողակային ապահովության մասին» եւ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ նախկին օրենքներով, իսկ ներկայումս դրանք կարգավորվում են «Պետական կենսաքողակաների մասին» եւ «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ գործող օրենքներով):

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսաստանի Դաշնության գործող օրենսդրությամբ ավելի բարձր գործակից սահմանելու հանգամանքը, ըստ պատասխանողի՝ չի վկայում այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը մինչեւ 1992 թվականի փետրվարի 14-ը զորացրված գինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների համար ավելի ցածր սոցիալական ապահովության մակարդակ է սահմանում: Վերջում, վկայակոչելով ՍԴ-Օ-864 եւ ՍԴ-Օ-914 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, պատասխանողը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, եթե օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ համապատասխան իրավական երաշխիքների առկայության դեպքում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա:

Պատասխանողը գտնում է, որ դիմումում հստակ արտահայտված չեն ՀՀ Սահմանադրության 37 եւ 43-րդ հոդվածներին Որոշման անհամապատասխանության փաստարկները:

5. Դիմումի, դրան կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև դիմումում վկայակոչված միջազգային համաձայնագրի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ դիմողը, ըստ էության, վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության խնդիրը պայմանավորում է հետեւյալ դիրքորոշումներով.

ա) գինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկելու ներկայիս օրենսդրական կարգավորումները համահունչ չեն Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամբողջությամբ չեն համապատասխանեցվել ԽՍՀՄ գինվորական այն պաշտոնները, որոնք նախկինում գոյություն են ունեցել, սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո վերացել են,

գ) գինվորական կոչումն ու պաշտոնային դրույթը՝ որպես համապատասխանության չափանիշներ, լիարժեք չեն արտացոլում նախկին եւ նոր գինվորական պաշտոնների հավասարությունը,

դ) գինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույթաչափերի հետ կապված հարցերը չեն կարող կարգավորվել Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումով:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Առաջադրված հիմնախնդիրների առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը գնահատել.

- միջազգային իրավական նորմերի կիրառելիության սահմանադրական երաշխավորման տեսանկյունից,
- անձանց սոցիալական ապահովության իրավունքը (այդ թվում՝ արտօնությունները) իրականացնելու եւ պաշտպանելու պայմանների ու կարգի օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,
- միջազգային պայմանագրերի եւ օրենքների հիման վրա եւ դրանց կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից որոշումներ ընդունելու վերաբերյալ սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

6. Սույն գործի առարկայի շրջանակներում զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ նշանակված կենսաբոշչակների մակարդակի հետ կապված հարցերի, ինչպես նաև դրանց վերահաշվարկման հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորումն իրականացվում է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների «Զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի եւ «Զինվորականների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաբոշչակային ապահովության եւ պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրերով (Հայաստանի Հանրապետության համար դրանք ուժի մեջ են մտել ստորագրման պահից):

Ընդ որում, այդ համաձայնագրերի համադրված վերլուծությունը վկայում է, մասնավորապես, հետևյալը՝

ա) ԽՍՀՄ նախկին զինված ուժերի զինծառայողների եւ նրանց ընտանիքների կենսաբոշչակային ապահովությունն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ սահմանված կամ սահմանվող պայմաններով, նորմերով եւ կարգով, որի տարածքում բնակվում են նշված զինծառայողները եւ նրանց ընտանիքները,

բ) զինծառայողների եւ նրանց ընտանիքների կենսաբոշչակային ապահովության մակարդակը հաստատվում է մասնակից պետությունների օրենսդրությամբ, որը չի կարող ավելի ցածր լինել, քան ԽՍՀՄ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենսդրությամբ եւ այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը («Զինվորականների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաքոչակային ապահովության եւ պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրի 1-ին հոդված):

ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է միջազգային պայմանագրերի՝ որպես Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասի կարեւորության եւ դրանց՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությանը (ՍԴ-966, ՍԴ-1050 եւ այլն):

Վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ օրենսդիրը, հաշվի առնելով նաեւ միջազգային վերոհիշյալ համաձայնագրերով ստանձնված պարտավորությունների կատարման պահանջը, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ ամրագրել է զինվորական պաշտոնների հավասարության պայմանները, որպիսիք են հանդիսանում զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը:

Չնայած այն հանգամանքին, որ դիմողը նախկին եւ նոր զինվորական պաշտոնների համապատասխանության չափանիշների ոչ լիարժեքության վերաբերյալ արտահայտված դիրքորոշման մասով որեւէ հիմնավորում չի ներկայացնում, իսկ նման լիազորություն վերապահված է բացառապես ՀՀ Ազգային ժողովին, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշատակված համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնել նախկին եւ նոր զինվորական պաշտոնների համապարփակ ցանկ սահմանելու եւ դրանք համապատասխանեցնելու պարտավորությունը: Ստանձնած պարտավորությունը վերաբերում է համարժեք սոցիալական երաշխիքների ապահովմանը: Միաժամանակ, հաշվի առնելով զինվորական պաշտոնների բազմազանությունը եւ ժամանակի ընթացքում դրանց հաճախակի փոփոխելիությունը՝ ՀՀ կառավարությունն իր՝ 1993 թվականի ապրիլի 19-ի թիվ 170 եւ հաջորդող այլ որոշումներով սահմանել է նաեւ ԽՍՀՄ նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաքոչակների վերահաշվարկման կարգը, պաշտոնային դրույքաշխերի հաշվարկման գործակիցները եւ դրույքները, որոնք կոնկրետացվել են այդ որոշումների հիման վրա ընդունված ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Բացի դրանից, սոցիալական ապահովության ծավալներն ու ձեւերը Համաձայնագրի մասնակից երկրներում տարբեր են, հետեւաբար, ենթադրվում է, որ տարբեր կարող են լինել նաև նախկին ԽՍՀՄ զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության մակարդակները։ Ուստի Համագործակցության մյուս որեւէ պետության օրենսդրությամբ ավելի բարձր գործակից սահմանելու հանգամանքը չի վկայում այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում՝ զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների համար՝ նախկին օրենսդրությամբ նշանակված եւ 1992 թվականի փետրվարի 1-ից հետո կատարված վերահաշվարկով կենսաթոշակային ապահովության մակարդակն ավելի ցածր է, քան ԽՍՀՄ օրենսդրությամբ եւ այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը։

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, ըստ որի՝ զինվորական կենսաթոշակ նշանակելիս պետք է հաշվի առնվի նաև զինծառայողի զբաղեցրած պաշտոնը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ՝ թե՝ նախկին, թե՝ ներկա օրենսդրական կարգավորումների շրջանակում զինվորական վերջին պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարման գումարի չափը դիտարկվում է որպես ելակետային ցուցանիշ՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու կամ վերահաշվարկելու համար։ Այդ սկզբունքը գործել է նաև նախկին՝ ԽՍՀՄ սոցիալական ապահովության օրենսդրությամբ։

Վերոգրյալից ակնհայտ է դասնում, որ զինվորական կենսաթոշակի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ թե զինվորական պաշտոնը, այլ յուրաքանչյուր պաշտոնին համապատասխան դրամական բավարարման գումարի չափը, որը ձեւաբրվում է պաշտոնային դրույքաչափում ու ամսական հավելավճարներից։

Վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ նախկին եւ նոր զինվորական պաշտոնների լիարժեք ու ամբողջական համադրության համար վեճի առարկա հորվածում սպառիչ ցանկի բացակայությունը, ինչպես նաև այդ պաշտոնների համապատասխանության չափանիշների ենթադրյալ ոչ լիարժեք լինելու հանգամանքը չեն կարող դիտարկվել որպես օրենքի տվյալ նորմի իրավակարգավորման շրջանակներում առկա բաց, ինչը կարող էր խոչընդոտ հանդիսանալ անձի իրավունքին առնչվող սոցիալական ու իրավական երաշխիքների իրականացմանը։ Դիմողի կողմից բարձրացված իմնախնդիրը պայմանավորված չէ օրենքի՝ իր կողմից վիճարկվող դրույթի իրավական բո-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վաճակությամբ կամ իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով՝ դրա հնարավոր անհստակությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետեւյալ սկզբունքային իրավական դիրքորոշումները, որ՝

ա) «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետեւանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը»,

բ) «...իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքսուում ... բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»:

Հաշվի առնելով այս դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից բարձրացված իրավական վեճը չի առնչվում «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության սահմանադրահրավական բովանդակությանը, ինչ ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

7. Ըստ դիմողի՝ ներկայիս օրենսդրական կարգավորումների շրջանակներում խախտվում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրված՝ սոցիալական ապահովության ծավալի ու ձեւերի՝ միայն օրենքով սահմանվելու իմացերատիվ պահանջը: Այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի հունվարի 29-ի ՍԴՈ-731 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ՀՀ Ազգային ժողովին է պատկանում կենսաբուժակների ծավալները եւ ձեւերը, դրանց նշանակման պայմանները եւ կարգը սահմանելու լիա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

զորությունը՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթները եւ/կամ նորմերը:

ՀՀ օրենսդրության (մասնավորապես «Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքի) ներկայիս կարգավորումների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում այն, որ օրենսդիրը հստակ սահմանել է պետական կենսաքոչակների տեսակները, կենսաքոչակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու) եւ վճարելու պայմաններն ու կարգը:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով ՀՀ կառավարությունը, ի թիվս այլ գործառույթների, իրականացնում է նաև պետական քաղաքականությունը սոցիալական ապահովության բնագավառում:

«Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի, «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի եւ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողնին կենսաքոչակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույթաշափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը: Հետեւարար, գործող օրենսդրությամբ հիշյալ դրույթաշափերի հետ կապված հարցերը պետք է կարգավորվեն առնավազն ՀՀ կառավարության, այլ ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդիր մարմինը, օրենքով սահմանելով կենսաքոչակների ծավալներն ու ծեւերը, միաժամանակ ՀՀ կառավարությանն է պատվիրակել սահմանելու զինծառայողնին կենսաքոչակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույթաշափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը: Հետեւարար, գործող օրենսդրությամբ հիշյալ դրույթաշափերի հետ կապված հարցերը պետք է կարգավորվեն առնավազն ՀՀ կառավարության, այլ ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ:

8. Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ սույն գործով վիճարկվող «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույթաշափերի սահմանման մասին» 1996 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 604 որոշման վերաբերյալ դիմումի ուսումնասիրությունից բխում է հետեւյալը.

ա) դիմողի կողմից բերված փաստարկների եւ տվյալ որոշման վերլուծականը հիմնականում վերաբերում է ինչպես իրավակիրառող մարմնի՝ ՀՀ պաշտպանության նախարարության գործողությունների իրա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վաշափության պարզաբանմանը, այնպես էլ այդ որոշման՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասին հակասելու հիմնավորումների արտահայտմանը,

բ) ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջի առկայության պայմաններում, դիմողը, ըստ Էության, սահմանադրական դատարանում վիճարկում է տվյալ որոշման ոչ թե սահմանադրականության հարցը՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի նորմերին համապատասխանության շրջանակում, այլև օրինականության հարցը՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բացառապես օրենքով կարգավորման սահմանադրական պահանջի կատարման տեսանկյունից:

Վերոհիշյալի կապակցությամբ, հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1136 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ներկայացված վեճի համատեքստում ՀՀ վարչապետի որոշման իրավաչափության հարցն օրենքի պահանջներին դրա համապատասխանության շրջանակներում է եւ ընդդատյա է ՀՀ վարչական դատարանի քննությանը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածով սահմանված են վարչական դատարանին ընդդատյա պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերը, իսկ նույն օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ նույն օրենսգրքի 191-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը՝ սույն որոշման մեջ արտա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաշափերի սահմանման մասին» թիվ 604 որոշման մասով գործի վարույթը կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հունիսի 2014 թվականի
ՍԴՈ-1154**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

10 Խունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրսագործության գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի ապրիլի 11-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի մայիսի 26-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի ապրիլի 11-ին Երեւանում՝ առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով ամրապնդելու եւ խորացնելու եւ Հայաստանի Հանրապետության զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից փոխադարձ համաձայնությամբ ընտրվելիք այլ հասցեատերերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (այսուհետ՝ Բանկ) ստանալ՝

- «Համայնքային ենթակառուցվածքներ II, 3-րդ փուլ» ծրագրի իրականացման եւ համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար՝ ֆինանսական օժանդակություն մինչեւ 2.500.000 եվրո գումարի չափով,
- «Համայնքային ենթակառուցվածքներ II, 3-րդ փուլ» ծրագրի համար՝ արտոնյալ վարկեր մինչեւ 30.000.000 եվրո գումարի չափով:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ 1-ին պարբերությունում նշված ծրագիրը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև փոխադարձ համաձայնությամբ կարող է փոխարինվել այլ ծրագրերով, իսկ 5-րդ պարբերության համաձայն՝ 1-ին պարբերության 1-ին կետով նշված ֆինանսական օժանդակությունները կփոխարինվեն վարկերով, եթե դրանք չօգտագործվեն այդ միջոցառումների համար:

4. Համաձայնագրի 1-ին հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն ավելի ուշ ժամանակահատվածում հենարավորություն է ընձեռում Բանկից ստանալ լրացուցիչ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ՝ Համաձայնագրով նշված ծրագրերի նախապատրաստման կամ իրականացմանն ու համակարգմանն անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար, ապա կիրառվում է սույն Համաձայնագրը:

5. Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վերը նշված գումարների օգտագործումը, գումարների տրամադրման պայմանները, ինչպես նաև հանձնարարականների տրման ընթացակարգը Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործող օրենսդրության համաձայն սահմանվում են Բանկի եւ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ ստացողների միջեւ կնքվող պայմանագրերում:

Ըստ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ նշված գումարների հատկացումները չեն կատարվում, եթե նախանական հատկացման տարվան հաջորդող յոթ տարիների ընթացքում չեն կնքվում համապատասխան վարկային կամ ֆինանսական պայմանագրեր: Ընդունում, նշված գումարների համար ժամկետն ավարտվում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ին:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վճարել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման եւ իրականացման շրջանակնե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յում առաջացող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը եւ պետական այլ տուրքերը,

- վարկի եւ ֆինանսական օժանդակության օգտագործումից անհրաժեշտարար բխող՝ ծովային, ցամաքային եւ օդային ճանապարհներով անձերի եւ գույքի տեղափոխման համար ուղեւորներին եւ առաքողներին տալ տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չեղոնարկել միջոցներ, որոնք կրացառեն կամ կղմվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, իսկ անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել պահանջվող բույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար,
- Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ երաշխավորել Բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրով վարկառուների ստանձնած պարտավորությունների, եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ,
- Համաձայնագրի 2-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ Բանկին տալ երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից, եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրա-իրավական խնդիրներից:

Ելնելով գործի բնաւորյան արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. 2014 թվականի ապրիլի 11-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հունիսի 2014 թվականի
ՍԴ-1155**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՑԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ
ՀԻՔՐԻԳՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ, ՊՏՂԱՀԱՏՎՈՂԱՅԻՆ
ՄՇԱԿԱԲՈՒՅՑՍԵՐԻ ԵՎ ԽՎՂՈՂԻ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ
ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և
ՀԱՄԱՁԱՆԱԳԻՏԱՅՄԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

Քաղ. Երեւան

10 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թողյա-
նի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող),
Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հան-
րապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ «Հ գյու-
ղատնտեսության նախարար Ս. Կարապետյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մայիսի 31-ին Սինսկում ստորագրված՝ Գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի և հիբրիդների սերմերի, պտղահատապտղային մշակաբույսերի և խաղողի տնկանյութի արտադրության ու մատակարարումների բազմակողմ միջպետական մասնագիտացման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի մայիսի 26-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի և հիբրիդների սերմերի, պտղահատապտղային մշակաբույսերի և խաղողի տնկանյութի արտադրության ու մատակարարումների բազմակողմ միջպետական մասնագիտացման մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի մայիսի 31-ին:

Համաձայնագրի նպատակն է իրականացնել համագործակցություն սելեկցիայի և սերմնաբուծության բնագավառում:

2. Համաձայնագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները:

ա) կազմել և հաստատել պետական գիտական հետազոտությունների, ինստիտուտների, սերմնաբուծական և տնկարանային կազմակերպությունների ցանկը, տեղեկացնել արտադրության ծավալների, գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի և հիբրիդների սերմերի իրացման, պտղահատապտղային մշակաբույսերի տնկանյութի վերաբերյալ.

բ) չգանձել արտահանման-մերմուծման մաքսատուրքեր՝ Համաձայնագրի շրջանակներում մատակարարվող գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի և հիբրիդների սերմերի, պտղահատապտղային մշակաբույսերի և խաղողի տնկանյութի արտահանման (ներկրման) դեպքերում.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գ) իրականացնել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների սերմնարուծության հարցերով Միջկառավարական համակարգող խորհրդի նիստերի անցկացման հետ կապված կազմակերպչական ծախսերը.

դ) իրականացնել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների սերմնարուծության հարցերով Միջկառավարական համակարգող խորհրդի անդամների եւ նիստերի մասնակիցների գործուղման ծախսերը:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները քիում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրախրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի մայիսի 31-ին Սինսկում ստորագրված՝ Գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի եւ հիբրիդների սերմերի, պտղահատապտղային մշակաբույսերի եւ խաղողի տնկանյութի արտադրության ու մատակարարումների բազմակողմ միջպետական մասնագիտացման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հունիսի 2014 թվականի
ՍՊԸ-1156**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱԳԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (28.11.2007թ.)

139-րդ ՀՈԴՎԱԾԻ 2-րդ ՄԱՍԻ ԵՎ 140-րդ ՀՈԴՎԱԾԻ 1-3-րդ

ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

3 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Ա. Թունյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի փորձաքննության վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դրսաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Մագդա Եղիազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթը քաղաքացի Մագդա Եղիազարյանի՝ 08.01.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգիրը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրը (այսուհետ՝ օրենսգիրք), ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին, ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից եւ ուժը կորցրել է 2014 թվականի հունվարի 7-ից:

Գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատական ակտ կայացնելու առանձնահատկությունները» վերտառությամբ 139-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր. «Ստուգումից հետո պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին՝ վարչական դատարանն այն անվավեր է ճանաչում այդ հիմքով՝ անկախ հայցվորի պահանջից»:

Օրենսգրքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի որոշումների բնույթը եւ իրավական հետեւանքները» վերտառությամբ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերը սահմանում էին. «1. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշումները պաշտոնական իրավաբանական պահից Հայաստանի Հանրապետության ամրող տարածքում պարտադիր են բոլորի համար:

2. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերն իրենց իրավաբանական ուժը կորցնում են դրանք անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշման պաշտոնական իրավաբանական պահից (ex nunc), բացառությամբ սույն հոդվածի 5-րդ եւ 9-րդ մասերով նախատեսված դեպքերի:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ վարչական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, սակայն վարչական դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից այլևս չեն կարող կիրառվել: ...»:

2. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահի՝ 12.11.1997թ. «Ատենախոսությունների փորձաքննության կարգը հաստատելու մասին» թիվ 150 հրամանի առողջին լինելու կամ այն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Դատարանն իր՝ 12 փետրվարի 2013 թվականի որոշմամբ որոշել է մերժել հայցադիմումը՝ հրամանն առողջին ճանաչելու մասով, այն պատճառաբանությամբ, որ. «... ՀՀ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության կարգով ճանաչել է միայն վարչական ակտ առ ոչինչ ճանաչելու կանոնը՝ միաժամանակ բացառելով այլ բնույթի իրավական ակտերն առ ոչինչ ճանաչելու հետագործությունը»:

Ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասով էլ դատարանը վերադարձել է հայցադիմումը՝ արձանագրելով բողոքարկման եռամսյա ժամկետի պահանջի խախտում: Դատարանը նաեւ արձանագրել է, որ հայցվորը չի ներկայացրել միջնորդություն բաց բողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ:

Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ վարչական դատարանն իր 11.04.2013 թվականի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը եւ ուժի մեջ բողել վարչական դատարանի որոշումը: Վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել է, որ «...իրավական ակտերի իրավաչափությունը որոշելու գործերով օրենսդիրը վարչական դատարանին վերապահել է միայն տվյալ վիճարկվող իրավական ակտը՝ դրա ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին անհամապատասխանությունը պարզելու դեպքում, անվավեր ճանաչելու լիազորությունը, իսկ նորմատիվ իրավական ակտը առ ոչինչ հաստատելու լիազորություն վարչական դատարանին չի վերապահել»: Որպես վերաքննիչ բողոքը մերժելու հիմք վերաքննիչ վարչական դատարանն ամրագրել է դիմողի կողմից դատավարական ժամկետի խախտման փաստը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 19.06.2013 քվականի որոշմամբ վերադարձվել է: Վճռաբեկ դատարանն իր որոշման հիմքում դրել է վերաքննիչ վարչական դատարանի որոշման վերոհիշյալ իրավական դիրքորոշումները:

3. Դիմողը, վիճարկելով օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ «անվավեր ճանաչելու» դրույթները, պնդում է, որ «Սույն դիմումով վիճարկվող ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 139, 140-րդ հոդվածների բովանդակությունից (կամ դատարանների կողմից դրանց հաղորդած իմաստից) բխում է, որ անձը հայց հարուցելու իրավունք չունի՝ ենթաօրենսդրական կամ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը կամ դրանց դրույթներն առոչինչ ճանաչելու (առոչինչ լինելը հաստատելու) պահանջով»: Դիմողը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտերի առոչինչ լինելու նյութաիրավական հիմքերը շարադրված են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, սակայն, ի տարրերություն վարչական ակտերի, նորմատիվ իրավական ակտերի առոչինչ ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու իրավունքը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով չի նախատեսվել: Ըստ այդմ՝ դիմողը գտնում է, որ օրենսդրի կողմից դատական վերահսկողությունից դուրս է դրվել մի ողջ ինստիտուտ, որով խաթարվում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի էությունը: Դիմումը գտնում է, որ օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ, 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթները՝ «անվավեր ճանաչելու» մասով, հակասում են ՀՀ Սահմանադրությանը՝ կամ օրենսդրի կողմից տրված բովանդակության, կամ անորոշ ձեւակերպված լինելու, կամ դատարանների կողմից հաղորդած բովանդակության պատճառով:

4. Պատասխանողի կարծիքով՝ դիմուի կողմից վիճարկվող նորմերն ընդգրկված են 28.11.2007թ. ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, որն ուժը կորցրել է 07.01.2014թ. նոր վարչական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո: Ըստ պատասխանողի՝ ակնհայտ է, որ այստեղ առնչվում ենք մի իրավական ակտի, որը, որպես այդպիսին, այլեւս գոյություն չունի, եւ դրա դրույթները՝ անկախ ՀՀ Սահմանադրության հետ համապատասխանության փաստից, այլեւս որեւէ իրավական հետեւանք չեն առաջացնում:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ «...խոսքը ոչ այնքան վիճարկող նորմերի հակասահմանադրականության մեջ է, հատկապես, որ դրանք որեւէ կերպ անհամապատասխանության մեջ չեն մտնում ՀՀ Սահմանադրության հետ, այլ առավելապես իրավակարգավորման բաց է, որն անհրաժեշտության դեպքում կարող է սահմանված կարգով լրացվել եւ ապահովել իրավակարգավորման ամբողջականությունը»:

5. Դիմումի եւ վերաբերելի դատական ակտերի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված է ոչ թե օրենսգրքի վիճարկող դրույթների հակասահմանադրականությամբ, այլ դիմողի կողմից օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետների բացքողումով, եւ այդ ժամկետները վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելով։ Այսինքն՝ դիմողը չի օգտվել օրենսդրությամբ իրեն ընձեռված իրավական պաշտպանության հնարավորություններից եւ ըստ էության դիմումով բարձրացնում է վերացական սահմանադրական վերահսկողությանը բնորոշ հարցադրում՝ օրենսգրքի վիճարկող նորմերի հակասահմանադրականությունն անուղղակիորեն փաստարկելով նրանով, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու հետևանքները կարող էին բացառվել նորմատիվ իրավական ակտն առոչինչ ճանաչելու օրենսդրական հնարավորության դեպքում, եթե օրենսգրքը պարունակեր նորմատիվ իրավական ակտն առոչինչ ճանաչելու ինստիտուտ։

6. Սույն գործում առկա փաստարդերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի՝ քաղաքացի Մ. Եղիազարյանի կողմից սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ վարչական դատարանի՝ 12.02.2013թ., ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 11.04.2013թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 19.06.2013թ. որոշումներում եւ մյուս իրավական ակտերում նշված վիճարկող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել, չնայած դրանցում անդրադարձ է կատարվել հիշյալ չկիրառված դրույթների իրավական բովանդակությանը։

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրախրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴԱ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման։ Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», եթե անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ։ Բոլոր այն դեպքերում, եթե վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը ձեւականորեն վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթների սահմա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմանը արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...քոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Մազդա Եղիազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007թ.) 139-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործի վարույթը կարծել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՅՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**3 հունիսի 2014 թվականի
ՍԴԱ-1157**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ Կ. ԲԱԼԱՅԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱԳԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆ ՎՐԱ
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (28.11. 2007թ.)
139-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 140-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆՔ
ՀԱՍՏՊԱՏԱԽԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՀՀ սահմանադրական դատարանի 2014թ. հուլիս 3-ի ՍԴՈ-1157 որոշմամբ կարծվել է Զաղաքացի Մագդա Եղիազարյանի դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11. 2007թ.) 139-րդ հոդվածի 2-րդ մասին և 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով վարույթը: Այդ որոշման հետ կապված ունենք հետևյալ նկատառումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11. 2007թ.) 140-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ անձը ենթաօրենսդրական կամ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը կամ դրանց դրույթները կարող են վիճարկել միայն անվավերության հիմքով: Նորմատիվ իրավական ակտերի առողջինչ ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու իրավունք ՀՀ վարչական դատավարության նշված օրենսգրքով չի նախատեսվել, որի պատճառով մեր կարծիքով սահմանափակվել է անձի արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Ճիշտ է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը (հոդ. 63) ցույց է տալիս, որ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է լինել ինչպես անվավեր, այնպես էլ առողջինչ: Ընդ որում, անվավեր վարչական ակտը կարող է լինել ինչպես առողջինչ հանդիսացող, այնպես էլ առողջինչ չհանդիսացող վարչական ակտը: Այլ կերպ ասած՝ առողջինչ վարչական ակտը բոլոր դեպքերում անվավեր է, իսկ անվավեր վարչական ակտը ոչ բոլոր դեպքերում է առողջինչ: Այլ կերպ կարող ենք ասել, որ առողջինչ վարչական ակտը անվավեր վարչական ակտի տարատեսակ է:

Նմանատիպ կարգավորում է նախատեսված նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածում, որի 1-ին և 2.1 մասերի վեր-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

լուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտը, որը հանդիսանում է առոջին իրավական ակտ՝ անվավեր իրավական ակտ է:

Սակայն արատավոր իրավակիրառական պրակտիկայից զերծ մնալու և մարդու արդար դատաքննության իրավունքի առավել արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նկատառումներով գտնում ենք, որ ճիշտ կլիմեր, որ օրենսդրական կարգավորում ստանար նաև իրավական ակտի առոջին չությունը վարչական դատարանում վիճարկելու իրավահարաբերությունը: Նամանավանդ, որ պատասխանողը՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչը, իր 28.04.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած Բացատրության մեջ նույնպես փաստել է իրավակարգավորման բացի առկայության մասին: Նա մասնավորապես նշել է. «Կարծում ենք, որ այստեղ խոսքը ոչ այնքան վիճարկվող նորմի հակասահմանադրականության մեջ է, հատկապես, որ դրանք որևէ կերպ անհամապատասխանության մեջ չեն մտնում ՀՀ Սահմանադրության հետ, այլ առավելապես իրավակարգավորման բաց է, որն անհրաժեշտության դեպքում կարող է սահմանված կարգով լրացվել և ապահովել իրավակարգավորման ամրողականությունը»:

Հետևապես, նույնիսկ կարճման պարագայում, եթե սահմանադրական դատարանը գտել է, որ այդ բացը իրավունքի խախտում չի առաջացնում (որի հետ համաձայն չենք) ՀՀ Ազգային ժողովի ուշադրությունը պետք է հրավիրել այդ բացի լրացման անհրաժեշտության վրա:

10.07.2014թ.

Կ. Բալայան



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻՎԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ ԵՎ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻՎԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ճԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՅՔԻ
ՆԵՐԴՐՈՒՄԸ ՃՐԱԳԻՐ - ՃՐԱԳԻՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՅԱՅՆՎՐՈՒՄ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿ-
ՀԱՄԱՅԱՅՆՎՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ
ՀԱՍՏՊԱՏԱԽԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյա-
նի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյա-
նի, Ա. Պետրոսյանի (զեկուցող).

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հան-
րապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հա-
յաստանի Հանրապետության տրամսպորտի և կապի նախարարի տե-
ղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դոճաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2014 թվականի հունվարի 21-ին և 2014 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2» վարկային համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի հուլիսի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան նույնագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, ինչպես նաև լսելով նրա բանավոր պարզաբնույնները, հետազոտելով նամակ-համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2» վարկային համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագիրն (այսուհետ՝ նաև Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է Ասիական զարգացման բանկի կողմից 2014 թվականի հունվարի 21-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2014 թվականի հունիսի 11-ին:

Նամակ-համաձայնագրի պայմանագրահրավական իմք հանդիսացող՝ 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2 (հատուկ գործողություններ)» վարկային համաձայնագիրը (Վարկային համաձայնագիր), ելնելով Հայաստանի Հանրապետության սահ-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մանադրական դատարանի 2011 թվականի հունիսի 16-ի ՍԴՈ-979 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2011 թվականի հունիսի 23-ի ԱԺՈ-280-Ն որոշմամբ:

2. Նամակ-համաձայնագրով Վարկային համաձայնագրով նախատեսված Ծրագիր 2-ի շրջանակներում վարկի փակման ժամկետը երկարաձգվում է 24 ամսով: Այդ նպատակով Վարկային համաձայնագրի 3.05-րդ բաժնի՝ «2015 թվականի հունիսի 30» բառերը փոխարինվում են «2017 թվականի հունիսի 30» բառերով:

Ելնելով սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքներից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Նամակ-համաձայնագրով նախատեսված փոփոխությունը պայմանավորված է Ծրագրում ներառված բաղադրիչների, մասնավորապես՝ Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների բնականոն, ամբողջական և պատշաճ կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Համաձայն Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ գրավոր բացատրության՝ կառուցվող Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի համար շինարարական աշխատանքների կապալի պայմանագիրը կնքվել է 2012 թվականի ապրիլի 27-ին: Սակայն շինարարական աշխատանքները մեկնարկել են միայն 2013 թվականի հունիսի 13-ին՝ կապված նշված հատվածում Ծրագրով պահանջվող հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ու ճանապարհի կառուցման համար անհրաժեշտ տարածքը երրորդ անձանց իրավունքներից ազատելու գործընթացի ավարտման հետ: Հարկ է նկատել, որ հողերի օտարման և տարաբնակեցման ընթացակարգը բարեփոխվելու նպատակով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-105-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որն ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 9-ին: Շինարարական աշխատանքների պայմանագրի համաձայն՝ աշխատանքների տևողության ժամկետը սահմանված է 1096 օր, ինչի արդյունքում շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2016 թվականի հունիսի 12-ին, այսինքն՝ մոտ մեկ տարի ավելի ուշ, քան վարկի փակման ամսաթիվն է: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքը, ինչպես նաև այն, որ թերությունների վերացման համար նախատեսված է մեկ տարի

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժամկետ, ուստի Հայաստանի Հանրապետությունը և Ասիական զարգացման բանկը համաձայնել են վարկի փակման ամսաթիվը երկարաձգել 24 ամսով, այսինքն՝ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը:

Նամակ-համաձայնագրով նախատեսված փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է պարտավորություն՝ վճարել լրացուցիչ պարտավճար՝ շուրջ 240 հազար ԱՄՆ դոլարի չափով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2014 թվականի հունվարի 21-ին և 2014 թվականի հունիսի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2» վարկային համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 սեպտեմբերի 2014 թվականի
ՄԴԱ-1158



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԲԲՅՈՒԽԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԼԻՔՆԱՆՈՒՄ
ՄԻՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՍՅԱՎՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Սահմանադրական դատարանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հունիսի 3-ին Բյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Խոալիայի Հանրապետության պաշտպանության նախարարության միջև Լիբանանում Միավորված ազգերի ժամանակավոր ուժերի շրջանակներում համագործակցության և աջակցության մասին տեխնիկական համաձայնագրում (այսուհետ՝ Տեխնիկական համաձայնագիր)» ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014թ. օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Տեխնիկական համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

2014թ. հունիսի 3-ին Բյուսելում ստորագրված Տեխնիկական համաձայնագրի նապատակն է սահմանել այն պայմանները, որոնց ներքո Հայաստանի Հանրապետության գինված ուժերի հետևակային դասակը՝ մինչև 30 գինծառայող և 2 սպա կազմով, հատկացվում է Լիբանանում Միավորված ազգերի ժամանակավոր ուժերի (այսուհետ՝ ՅՈՒՆԻՖԻԼ) իտալական գինված ուժերի ստորաբաժանմանը, ինչպես նաև Կողմերի միջև համագործակցության մանրամասները:

Տեխնիկական համաձայնագիրն ունի «Ռազմավարական տեղաշարժերը» վերտառությամբ հավելված:

Տեխնիկական համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

- իտալական զորախմբին տրամադրել հայկական զորախումբ, ներառյալ՝ հետևակային դասակը՝ մինչև 30 գինծառայող կազմով, 1 շտարային սպա՝ զումարտակի շտարում ծառայելու համար և 1 շտարային սպա՝ բրիգադի շտարում ծառայելու համար,
- ապահովել, որպեսզի հայկական զորախումբը կցվի իտալական զորախմբին 6 ամիս ժամկետով, ոռտացիոն հիմքով, ինչպես նաև ապահովել, որ հայկական զորախմբի անձնակազմի որևէ գինծա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ուայողի վաղաժամ փոխարինման դեպքում պահպանվի հայկական զորախմբի՝ Տեխնիկական համաձայնագրով նախատեսված զինծառայողների անհրաժեշտ քանակը,

- ապահովել, որպեսզի շտարային սպաները և դասակի հրամանատարներն ունենան անզերենի բավարար գիտելիքներ, իսկ անձնակազմի մյուս անդամները՝ անզերենի բազային գիտելիքներ,
- երաշխավորել, որ հայկական զորախումբը կիրականացնի իր ստատիկ խնդիրները՝ որպես ուժերի պաշտպանության դասակ՝ պաշտպանելով/պահպանելով Արևմտյան հատվածի շտարի համալիրը (ՍԱԿ-ի բազա 2-3-Շամա) և/կամ Իրավրաք համալիրը (ՍԱԿ-ի բազա 1-26 Ալ Մանսուրի) իտալական զորախմբի հրամանատարի օպերատիվ հսկողության ներքո,
- հոգալ հիվանդանալու կամ վիրավորվելու դեպքում հայկական անձնակազմի անդամների լրացուցիչ բուժման հետ կապված ծախսերը, եթե տեղակայման վայրում բուժում ստանալուց հետո անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ բուժման, և դա չի կարող կազմակերպվել տեղում, ինչպես նաև հոգալ քաղաքացիական բուժական հաստատությունների օգտագործման հետևանքով առաջացած ծախսերը,
- հոգալ տեղակայման պետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն փոխադրման հետ կապված ծախսերը, եթե տեղակայումը վաղաժամ դադարեցվել է կարգապահական պատճառներով,
- փոխադրման հիման վրա լինել պատասխանառու Տեխնիկական համաձայնագրի իրականացման ընթացքում երրորդ անձանց հասցված վնասների համար (հողված 8, կետ 1), ինչպես նաև կրել պատասխանատվություն հայկական զորախմբի անձնակազմի կողմից օգտագործման նպատակով իրեն հանձնված գույքը և հանդերձանքը վճարելու կամ կորցնելու անփույթ գործողությունների համար:

Իտալական կողմը, ի թիվս այլնի, հայկական կողմի առջև ստանձնում է հետևյալ պարտավորությունները՝

- տեղակայման վայրում հիվանդանալու կամ վիրավորվելու դեպքում հայկական զորախմբի անձնակազմի անդամներին տրամադրել ամբողջատոր և ստացիոնար անվճար բժշկական օգնություն իտալական բժշկական հաստատություններում,
- անվճար հիմունքներով ապահովել հայկական զորախմբի անձնա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կազմի անհրաժեշտ փոխադրումը դեպի գործողությունների քառերաբեմ և հետադարձ ուղղությամբ,

- ՍԱԿ-ի հետ ճշգրիտ ընթացակարգերի սահմանման միջոցով ապահովել, որպեսզի հայկական կողմը կարողանա անմիջապես ՍԱԿ-ից հայկական անձնակազմի ծախսերի դիմաց ստանալ փոխատուցում:

Տեխնիկական համաձայնագրը Կողմերի համար նախատեսում է նաև այլ իրավունքներ և պարտականություններ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համաձայն քննության առնվող միջազգային իրավական փաստաթղթի՝ Լիքանանում իրենց կողմից կատարված ցանկացած հանցագործության համար հայկական կողմից զինվորականները ենթարկվում են Հայաստանի Հանրապետության բացառիկ իրավազորությանը՝ համաձայն «Լիքանանում Սիավորված ազգերի կազմակերպության ժամանակավոր ուժերի կարգավիճակի մասին» 1995 թվականի դեկտեմբերի 15-ով թվագրված համաձայնագրի 47-րդ հոդվածի «բ» կետի:

Տեխնիկական համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ Կողմերի միջև կարգավորվում է խորհրդակցությունների միջոցով, իսկ որա գործողությունը կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ, Կողմերի փոխադրձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի՝ մյուս Կողմին իննուուն օր առաջ գրավոր ժամուցելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Տեխնիկական համաձայնագրով ստանձնված փոխադրձ պարտավորությունները համահունչ են ՍԱԿ-ի շրջանակներում՝ միջազգային խաղաղության և անվտանգության նպատակով պետությունների համագործակցության ժամանակակից միջազգային իրավական պահանջներին:

Նկատի ունենալով, որ Տեխնիկական համաձայնագրի նպատակն է միջազգային համագործակցության միջոցով ապահովել խաղաղությունը և անվտանգությունը կոնկրետ տարածաշրջանում, սահմանադրական դատարանը նշում է, որ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի հունիսի 3-ին Բյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Խտալիայի Հանրապետության պաշտպանության նախարարության միջև Լիբանանում Միավորված ազգերի ժամանակավոր ուժերի շրջանակներում համագործակցության և աջակցության մասին տեխնիկական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատախանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԴ.Ո-1159**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱՋՎԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՍՈՅԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԾՐԱԳԻՐ»
ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՎՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՑԵ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

2 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Սիցազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված՝ «Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր» ֆինանսավորման համա-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացարությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթրթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվել է 2014 թվականի մայիսի 23-ին՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիցազգային զարգացման ընկերակցության միջև։

2. Համաձայնագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 13.900.000 Հատուկ փոխառության իրավունքին համարժեք վարկ՝ Համաձայնագրով նախատեսված ծրագրի նպատակներն իրականացնելու համար, մասնավորապես՝ սոցիալական պաշտպանության ծառայության մատուցումը բարելավելու եւ սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող եւ ծառայություններ մատուցող մարմինների վերլուծական, մշտադիտարկման ու գնահատման գործառույթները հղորացնելու համար։

Ծրագրով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, հարկերի մասով, 20 տոկոս համաֆինանսավորում։ Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝ 5 տարի։

Ծրագիրը բաղկացած է թվով հինգ բաղադրիչներից։

- ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- աշխատանքի եւ զբաղվածության ոլորտի բարեփոխումների իրականացում,
- կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության վերլու-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ծական կարողությունների, մոնիթորինգի եւ գնահատման համակարգի զարգացում,

- Ծրագրի կառավարում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- առհանել ֆինանսավորման հասույթները՝ Համաձայնագրի առդիր 2-ի Բաժին 4-րդի համաձայն,
- ֆինանսավորման շառհանված մնացորդի դիմաց վճարել պարտավճար՝ տարեկան մեկ տոկոսի կեսից ոչ ավելի դրույքաչափով,
- առհանված վարկային մնացորդի դիմաց վճարել սպասարկման վճար՝ տարեկան մեկ տոկոսի երեք քառորդին հավասար չափով,
- առհանված վարկային մնացորդի դիմաց վճարել տոկոսավճար՝ տարեկան մեկ ամբողջ քանիչին տոկոսի չափով,
- վարկի մայր գումարը մարել Համաձայնագրի առդիր 3-ում սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան,
- Ծրագրի պատշաճ վերահսկման, համակարգման եւ իրականացման նպատակով՝ Ծրագրի ուժի մեջ նտնելուն հաջորդող մեկամսյա ժամկետում ստեղծել Կառավարման խորհուրդ, որը պատասխանատվություն կրի Ծրագրին առնչվող կարեւոր որոշումների, դրա իրականացման ընդհանուր ընթացքը մշտադիտարկելու եւ առաջացող խնդիրները կարգավորելու համար,
- ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կազմում ստեղծել Ծրագրի համակարգման գրասենյակ, որը կրում է Ծրագրի միջոցառումների ընդհանուր տեխնիկական համակարգման, նախապատրաստման, իրականացման, մշտադիտարկման եւ գնահատման պատասխանատվություն,
- Ընկերակցության հաստատմանը ներկայացնել ակտիվ աշխատաշուկայի ծրագրի շրջանակներում որակավորում չունեցող երիտասարդներին եւ/կամ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմանն ուղղված պիլոտային ծրագրերի նախագծման եւ իրականացման մանրամասն առաջարկ, այնուհետեւ՝ Ընկերակցության պահանջները բավարարող տեխնիկական առաջարկանքի համաձայն պատրաստել որակավորում չունեցող երիտասարդներին եւ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմանն ուղղված գործառնական ձեռնարկներ, որոնք կպարունակեն տեխնիկական, վարչական, գնումների, շրջակա միջավայրի եւ սոցիալական, ֆի-

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- նանսական, հաշվապահական հաշվառման, մշտադիտարկման եւ գնահատման մանրանասն ընթացակարգեր, մեխանիզմներ եւ ներկայացնել Ընկերակցության ուսումնասիրմանն ու հաստատմանը,
- գործառնական ձեռնարկները հաստատելուց հետո՝ ոչ ուշ, քան քառասունինգ օրվա ընթացքում ձեւավորել եւ իրականացնել Ծրագրի իրականացման ողջ ընթացքում բողոքարկման հասանելի մեխանիզմ, որն ընդունելի կլինի Ընկերակցության կողմից, եւ որի նպատակն է շահառուների ընտրությանը եւ կանխիկ դրամաշնորհների տրամադրմանն առնչվող բողոքների կարգավորումը,
 - Ընկերակցության պահանջները բավարարող պայմաններով իրականացնել հանրային իրազեկման, տեղեկատվական քարոզարշավներ՝ պիլոտային ծրագրերի եւ կանխիկ դրամաշնորհների վճարման վերաբերյալ,
 - նախքան Ծրագրի Մաս II.2 (ա)-ի իրականացման մեկնարկն ապահովել Ընկերակցության պահանջները բավարարող պայմաններով եւ որակավորում չունեցող երիտասարդ շահառուների, գործառուների եւ այլ կազմակերպությունների միջեւ վերապատրաստման մասին համապատասխան համաձայնագրերի կնքումը եւ այդպիսի համաձայնագրի օրինակելի ձեւը Ընկերակցության ուսումնասիրմանն ու հաստատմանը ներկայացնելը, ինչպես նաև ապահովել, որ այդ համաձայնագրերը կատարվեն պատշաճ խելամտությամբ եւ արդյունավետությամբ, Ընկերակցության պահանջները բավարարող տեխնիկական, ֆինանսական եւ կառավարչական չափանիշների եւ պրակտիկայի, այդ թվում՝ Հակակոռուպցիոն ուղղությունների համաձայն,
 - Ծրագրին իրականացնել երաշխիքային շրջանակների եւ երաշխիքային բոլոր փաստարդերի համաձայն,
 - իրականացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում ու գնահատում եւ ներկայացնել հաշվետվություններ Ընկերակցության համար ընդունելի ցուցանիշների հիման վրա,
 - վարել կամ ապահովել ֆինանսական կառավարման համակարգը,
 - պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունինգ (45) օր հետո Ընկերակցությանը ներկայացնել վերջինիս պահանջները բավարարող ձեւաչափով եւ բովանդակությամբ միջանկյալ, առողիտ չանցած Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծրագրի մասին հաշվետվության մաս եւ ընդգրկում են տվյալ կիսամյակը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված՝ «Սոցիալական պաշտպանության վարչարության 2-րդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2 սեպտեմբերի 2014 թվականի
ՄԴԱ-1160**

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
Յ-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ ՍԵՌԻԼՈՒՄ**



կան արդարադատության տարածաշրջանային եւ լեզվական խմբերի հանդիպումները:

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Վենետիկի հանձնաժողովի բյուրոյի անդամ Գագիկ Հարությունյանը մասնակցեց Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի անդամների հանդիպմանը: Նոյն օրը Գ. Հարությունյանի նախագահությամբ կայացավ նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի մասնակիցների հանդիպումը, որի շրջանակներում քննարկվեցին կազմակերպության հետագա անելիքները, կազմակերպության գալիք միջոցառումների ցանկը եւ անդամների միջեւ համագործակցության հիմնական ուղղությունները: Նոյն օրը երեկոյան կայացավ Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի բյուրոյի նիստը, որը նախագահում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը:



2014թ. սեպտեմբերի 28-ին

Կորեայի Հանրապետության մայրաքաղաք Սեուլում իր աշխատանքները սկսեց Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի Յ-րդ Կոնգրեսը: Կոնգրեսի շրջանակներում կայացան սահմանադրա-



ներկայական անդամները, կազմակերպության գալիք միջոցառումների ցանկը եւ անդամների միջեւ համագործակցության հիմնական ուղղությունները: Նոյն օրը երեկոյան կայացավ Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի բյուրոյի նիստը, որը նախագահում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը: Նիստի օրակարգում ընդունված էին Բյուրոյի գործունեության հաշվետվության հաստատման, ֆինանսական հաշվետվության, Համաշխարային կոնֆերանսի ֆինանսական ներդրումներ կատարելու ուղեցույցի հաստատման եւ այլ հարցեր:

Մեպուեմբերի 29-ին կայացավ Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի 3-րդ կոնգրեսի բացման արարողությունը, որին բացման ուղերձով դիմեցին Կորեայի Հանրապետության նախագահ Փակ Կըն Հյեն եւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղար Պան Գի Մունը (վիդեոկապով): Մատնանշելով միջոցառումների անցկացման կարեւորությունը, սահմանադրական արդարադատության կայացման եւ սոցիալական ինտեգրման դերը ՄԱԿ-ի կանոնադրությամբ հոչակված նպատակներին հասնելու գործում, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը ողջույններ հղեց Կորեայի Հանրապետության նախագահ Փակ Կըն Հյեն, Կորեայի սահմանադրական դատարանի նախագահ Փարկ Հան Չուլին, Վենետիկի հանձնաժողովի նախագահ Զիանի Բուքիքիոյին եւ Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի բյուրոյի նախագահ Գագիկ Հարությունյանին՝ Երրորդ կոնգրեսին մաղթելով արդյունավետ աշխատանք:



Կոնգրեսին անդամակցում են աշխարհի 92 երկրների սահմանադրական դատարաններ: Հրավիրյաներով հանդերձ, Կոնգրեսի աշխատանքներին մասնակցեցին 100-ից ավելի երկրների պատվիրակություններ: Ջննության առնվեցին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են. «Սոցիալական ինտեգրման միջազգային չափանիշները», «Սահմանադրության առաջնային դիրքությունը»:



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



բական արդարադատության դերը սոցիալական ինտեգրման գործընթացում», «Սահմանադրական դատարանների անկախության երաշխավորման հիմնախնդիրները» եւ այլն:

Կոնգրեսի աշխատանքները շարունակվեցին մինչեւ **հոկտեմբերի 1-ը**:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԸ ՍԴ-ՈՒՄ



Հոկտեմբերի 7-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիկո Մուհմանիկսին:

Զրույցն ընթացավ դատական համակարգի հնարավոր բարեփոխումների հետ կապված հարցերի շուրջ:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների համատեքստում քննարկվեցին նաև սահմանադրական արդարադատության հետագա զարգացման հետ կապված խնդիրներ:

Հոկտեմբերի 16-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Թիան Չանչունին**:



Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտելու կապակցությամբ Սահմանադրական դատարանում դեսպանի հետ հրաժեշտի հանդիպում կազմակերպվեց ՍԴանդամների եւ դեսպանին ուղեկցող անձանց մասնակցությամբ:

Ներկայացնելով հյուրին, պարոն Հարությունյանը կարեւորեց վերջին տարիներին իրավական ոլորտում հայ-չինական հարաբերությունների զարգացումը, որում իր անձնական ակտիվ ներդրումն է ունեցել պարոն Թիան Չանչունը: Եղել են փոխադարձ այցելություններ՝ ՀՀ ՍԴ պատվիրակությունն է մեկնել Չինաստան եւ ՉԺՀ Ազգային Մեծ Ժողովի մշտական կոմիտեի իրավական հանձնաժողովի պատվիրակությունն է հյուրընկալվել ՀՀ ՍԴ-ում: Եվ պատահական չե, որ Սահմանադրական դատարանն աշխատակարգային որոշում կայացրեց՝ «Հայ-չինական բարեկամական հարաբերությունների զարգացման, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի եւ Չինաստանի ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաշխանական ժողովի իրավաբանական հանձնաժողովի միջեւ համագործակցության հաստատման գործում ունեցած ակնառու ավանդի համար Հայաստանի Հանրապետությունը»:



Հայաստանի ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաշխանական ժողովի իրավաբանական հանձնաժողովի միջեւ համագործակցության հաստատման գործում ունեցած ակնառու ավանդի համար Հայաստանի Հանրապետությունը»:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

նում Զինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան, պարոն ԹԻԱՆ ՉԱՆՉՈՒԽԻՆ պարգևատրել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՌՍԿԵ ՀՈՒԾԱՄԵԴԱԼՈՎ»:



Հանձնելով հուշամեդալը, պարոն Հարությունյանը դեսպանին հաջողություններ մաղթեց նրա հետագա գործունեության համար:

Ընորհակալական խոսքով հանդես եկավ դեսպանը:

Հանդիպման մասնակիցները շնորհավորեցին դեսպանին եւ բարի ճանապարհ մաղթեցին:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՐԵՎԱՆՅԱՆ 19-ՐԴ ՄԻՋԱԳԱՎՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 24-ին իր աշխատանքները սկսեց երեւանյան միջազգային 19-րդ խորհրդաժողովը:

Այն կազմակերպել են ՀՀ սահմանադրական դատարանը, Վենետիկի հանձնաժողովը, Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսը, ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնը՝ աջակցությամբ ՀՀ-ում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ):



Թէևսամ՝ «Մարդու իրավունքների արժանապատվության սահմանադրական կարգավիճակը»:

Խորհրդաժողովում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը: Նա իր երախտագիտությունը հայտնեց բոլոր ներկաներին, առաջին հերթին հյուրերին՝ միջազգային կարեւոր այս խորհրդաժողովին մասնակցելու

հրավերն ընդունելու եւ Հայաստան ժամանելու համար: Հատուկ շեշտեց Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահ Զիանի Բուքիքինի մասնակցությունը, եւ հանձնաժողովի մեծ դերը միջազգային մակարդակում սահմանադրական արդարադատության զարգացման գործում: Վերջին տարիներին Վենետիկի հանձնաժողովի հետ մեկտեղ ՀՀ սահմանադրական դատարանի լավ բարեկամն ու աջակիցն է դարձել նաև Գերմանական GIZ կազմակերպության իրավական ծրագիրը, առանց որի անհնարին կլիներ նման շարունակական ընդգրկուն ու պատասխանատու խորհրդաժողովների գումարումը:

Գ. Հարությունյանը շնորհակալությամբ փաստեց 20-ից ավել երկներից ժամանած սահմանադրական դատարանների նախագահների եւ պատվիրակությունների ներկայությունը: Նա կարեւորեց այսօրվա քննարկվելիք՝ «Անձի արժանապարփության սահմանադրական կարգավիճակը» թեման, որը հաստատվել է Վենետիկի հանձնաժողովի հետ տեսական քննարկումների արդյունքում եւ, մեկնարաբնելով դրա կարեւորությունը, ներկայացրեց թեմայի հետ կապված կարեւոր դրույթներ, որոնք քննարկման առարկա կդառնան այս խորհրդաժողովում:

Այս խորհրդաժողովում մի նորամուծություն կա՝ ներկաների մասնակցությամբ կձեւավորվի վիրտուալ սահմանադրական դատարան, որը պիտի պատասխանի մեկ հարցի՝ «Ո՞րն է սահմանադրական մակարդակում մարդու արժանապարփության առավել խոր ու ամրութական բանաձեռնումը»: Խորհրդաժողովի մասնակիցներից յուրաքանչյուրն իր տեսակետը կմերկայացնի այդ հարցի հետ կապված եւ խորհրդաժողովի աշխատանքներն ամփոփելիս կընդունվի վիրտուալ սահմանադրական դատարանի «որոշումը»:

Գ. Հարությունյանը խորհրդաժողովին մաղթեց ստեղծագործական մթնոլորտ եւ արդյունավետ աշխատանք:

Բացման խոսքով հանդես եկավ նաև Վենետիկի հանձնաժողովի նախագահ Զիանի Բուքիքինն: Նա գրիւնակություն հայտնեց Վենետիկի



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

հանձնաժողովի եւ ՀՀ սահմանադրական դատարանի սերտ համագործակցության համար, որի վկայություններից մեկը երեւանյան միջազգային խորհրդաժողովներն են, որոնք մշտապես կազմակերպվում են Հանձնաժողովի եւ ՀՀ սահմանադրական դատարանի հետ համատեղ:

Խորհրդաժողովին ողջույնի ուղերձ էր հղել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը: Ուղերձում մասնավորապես ասված է՝ «Խորհրդաժողովի հարգարժան մասնակիցներ, շատ ուրախ եմ, որ կրկին Հայաստան են ժամանել 20-ից ավելի երկրների անվանի սահմանադրագետներ՝ քննության առնելու բացառիկ կարեւորության մի հիմնախսնդիր՝ մարդու արժանապատվության սահմանադրական կարգավիճակը: ...Մեզ համար քննության առարկա հիմնախսնդիրն առավել կարեւորվում է՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել կարեւոր սահմանադրական բարեփոխումների: Ընդհամենն օրեր առաջ է մաս-

նազիտական հանձնաժողովը ներկայացրել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը: Այն քննարկվել եւ հավանության է արժանացել նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի լիազումար նիստում եւ առաջիկայում քաղաքական քննարկումների փուլ է անցնելու»:

...ՀՀ Նախագահի ուղերձում կարեւորվում են Սահմանադրության համար անկյունաքարային նշանակություն ունեցող մարդու արժանապատվության սահմանադրական ինստիտուտը եւ դրա իրացման անհրաժեշտ իրավական կառուցակարգերը:

Հանրապետության Նախագահը համոզունք է հայտնում, որ այս իրատապ հիմնախսնդիրի շուրջ երեւանյան 19-րդ միջազգային խորհրդաժողովում ներկայացվող զեկույցները եւ



թյան առարկա հիմնախսնդիրն առավել կարեւորվում է՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել կարեւոր սահմանադրական բարեփոխումների: Ընդհամենն օրեր առաջ է մաս-



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

քննարկումներն օգտակար դերակատարություն կունենան թե՝ սահմանադրական զարգացումների եւ թե՝ սահմանադրական արդարադատության պրակտիկայի տեսանկյունից:

Ուղերձում պարոն Նախագահը խորհրդաժողովի մասնակիցներին մաղթում է բեղմնավոր աշխատանք եւ հաճելի օրեր մեր հյուրընկալ երկրում:

Խորհրդաժողովում ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը: Վերջինս ընդգծեց ՀՀ սահմանադրական դատարանի առանձնահատուկ դերը ոչ միայն իր որոշումներով արժանապատվության իրական բովանդակությունը եւ գործնական նշանակությունն ամրագրելու, այլև նման կարեւորություն ունեցող համաժողովների նախաձեռնությունը:

Խորհրդաժողովի 1-ին նիստում, որը նախագահում էր Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուրիքիոն, թեմատիկ գեկուցումներով հանդես եկան՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր Զդրավկա Կալայջիեան. «Մարդու արժանապատվության վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դոկտրինայ մոլորդումները՝ որպես Եվրոպական կոնվենցիայի հիմնարար արժեք», Լեհաստանի սահմանադրական տրիբունալի նախագահ Անգել Ժեպլինսկին. «Մարդու արժանապատվություն եւ անհարի արժանապատվություն», ՌԴ ՍԴ դատավոր Նիկոլայ Բոնդարը. «Անձի արժանապատվությունը սահմանադրական արդարադատության արժեհամակարգում»:

Չեկուցումների քննարկումներով ավարտվեց առաջին նիստը:



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Երկրորդ նիստը նախագահում էր Մոլդովայի ՍԴ նախագահ Ալեքսանդրու Տեմասեն: Թեմատիկ գեկուցումներով հանդես եկան՝ Գերմանիայի Դաշ-

նության Թյուրինգիայի երկրամասի ՍԴ անդամ Մանֆրեդ Բալդուսը. «Մարդու արժանապարփության նորմը Գերմանիայի Հիմնական օրենքում, նորմի զարգացումը 1949 թվականից», Լատվիայի ՍԴ նախագահ Ալբիս Լապինչը. «Մարդու արժանապարփության սահմանադրական կարգավիճակը եւ Լատվիայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկան», Խորայելի գե-



րագույն դատարանի դատավոր Սալիմ Չուրրանը. «Մարդու արժանապարփության սահմանադրական կարգավիճակն Խորայելում», Պորտուգալիայի ՍԴ փոխնախագահ Մարիա Լուսիա Ամարալը. «Մարդու արժանապարփության հիմնահարցը Պորտուգալիայի սահմանադրական դատարանի պրակտիկայում»:

Կայացան գեկուցների քննարկումներ:

3-րդ նիստը նախագահում էր Լատվիայի ՍԴ նախագահ Ալբիս Լապինչը: Թեմատիկ գեկուցումներով հանդես եկան՝ Վրաստանի ՍԴ նախագահ Գեորգի Պապուաշվիլին. «Մարդու արժանապարփությունը որպես հիմնարար իրավունք եւ առաջնորդող սկզբունք Վրաստանում սահմանադրական որոշումների կայացման գործընթացում», Լիտվայի



իրավունք իրավունք եւ առաջնորդող սկզբունք Վրաստանում սահմանադրական որոշումների կայացման գործընթացում», Լիտվայի

ՍԴ դատավոր Գեղիմինաս Մեսոնիսը. «Մարդու արժանապարփորյան սահմանադրական կարգավիճակը լիրվայի փորձը», ՀՀ ՍԴ աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության գլխավոր մասնագետ Նելլի Սոաքելյանը. «Անձի արժանապարփորյան սահմանադրական կարգավիճակը եւ դրա արդացողումը սահմանադրական արդարադարձության շրջանակներում», Կորեայի ՍԴ սահմանադրական վերլուծության փորձագետ Սունհուդ Կիմը. «Ինչպես են չանրապետության Սահմանադրության մարդու արժանապարփորյանն առնչվող դրույթից (հոդված 10)»:

Այդօրվա նիստն ավարտվեց գեկույցների քննարկումներով:

Հոկտեմբերի 25-ին խորհրդաժողովը շարունակեց աշխատանքը:

ԵՐԵՎԱՆՅԱՆ 19-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

Հոկտեմբերի 25-ին երեւանյան միջազգային 19-րդ խորհրդաժողովը շարունակեց իր աշխատանքը:

Չորրորդ նիստը նախագահում էր Լեհաստանի սահմանադրական տրիբունալի նախագահ Անջեյ Շեպինսկին:

Թեմատիկ գեկույցներով հանդես եկած՝ Բոսնիայի եւ Հերցեգովինայի ՍԴ դատավոր Զլատկո Կնեժենիչը. «Մարդու իրավունքների Եվրոպական կոմիտեցիայի 10-րդ հոդվածով մախարտեսված կարծիք արդարադարձություն, հանրային հեռարձակողների համակարգի անկախություն», Թուրքիայի ՍԴ դատավոր Էնգին Ֆյուլյումը. «Թուրքիայի Հանրապետության սահմանադրական դարպարանի մարդու արժանապարփորյան իրավագիրություն», Սերբիայի ՍԴ դատավոր Տոմիսլավ Ստոյկովիչը. «Մարդու արժանապարփորյան սահմանադրական կարգավիճակը եւ Սերբիայի սահմանադրական պրակտիկան», Տաջիկստանի Հանրապետության ՍԴ դատավոր Քարիմ Քարիմովը. «Սահմանադրական արդարադարձությունն ու մարդու եւ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 4(74)2014

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

քաղաքացու պատվի եւ արժանապատվության պաշտպանությունը (Տաշիկարանի օրինակը)»:

Չեկուցումների քննարկումներով ավարտվեց չորրորդ նիստը:

5-դ նիստը նախագահում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

Թեմատիկ գելույցներով հանդես եկամ՝ Բելգիայի Թագավորության ՍԴ դատավոր Տրիս Մերքս-Վան Գույը. «Մարդու արժանապատվության իրավունքը Բելգիայի Սահմանադրությունում. Սահմանադրության հոդված 23-ի գործողության շրջանակը եւ դրա կիրառումը սահմանադրական դատարանի կողմից», Մոլովայի Հանրապետության ՍԴ նախագահ Ալեքսանդրու Տենասեն. «Մարդու արժանապատվության սահմանադրական կարգավիճակը Մոլովայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկայում», Ղազախստանի ՍԴ դատավոր Վիկտոր Մալինովսկին. «Ղազախստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը որպես սահմանադրական արժեք», Բուլղարիայի Հանրապետության ՍԴ դատավոր Ռումեն Նենկովը. «Անկախ դատարանի մարզելիությունը՝ որպես սահմանադրական արժեք հանդիսացող մարդու արժանապատվության պաշտպանության երաշխիքը»:

Չեկուցումների քննարկումներով եւ հարց ու պատասխաններով ավարտվեցին գելույցումներն ու քննարկումները:

Խորհրդաժողովի աշխատանքներն ամփոփեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

- Ես ցանկանում եմ ձեզ ներկայացնել մի քանի հիմնական նկատառումներ: Արժանապատվության վերաբերյալ մեր գիտելիքները որքան շատ են, այնքան էլ դեռ ոչ համարժեք սիստեմավորված, որպեսզի կարողանանք ոչ միայն միարժեք քանածելում ներկայացնել, այլ նաև ունենալ դոկտրինալ միանական մոտեցումներ այս սկզբունքի կամ սահմանադրական այս ինստիտուտի իրաց-



ման հարցում: Որքան էլ զարմանալի է, երկու հիմնական հասկացությունների վերաբերյալ է այսպիսի վիճակ ստեղծվել՝ արժանապատվություն եւ իրավունքի գերակայություն: Վերջերս Վենետիկի հանձնաժողովում մենք անդրադարձ ունեցանք իրավունքի գերակայությանը: Խնդիրը հետեւյալն է՝ վերջապես ո՞րն է դրա էությունը եւ որո՞նք են եվրոպական միասնական չափորոշիչներն այս առումով: Մեծ Քրիտանիայում կազմակերպվեց կոնֆերանս սրա վերաբերյալ, 2012 թվականին նույնիսկ ՍԱԿ-ը անդրադարձավ, քանաձեւ ընդունեց իրավունքի գերակայության վերաբերյալ: Անցյալ տարի մենք Երեւանում ունեցանք «Իրավունքի գերակայութան եւլուսական չափորոշիչները եւ ազգային իշխանությունների հայեցողության սահմանները» թեմայով բավականին լայն ընդգրկումով միջազգային կոնֆերանս, որին շուրջ 40 երկրների պատվիրակություններ էին մասնակցում: Այսօր էլ այս հարցի վերաբերյալ քանավեճները, քննարկումները շարունակվում են: Մեզ անհրաժեշտ է, որպեսզի կարողանանք ունենալ որոշակի հստակ կողմնորոշիչներ: Կոնֆերանսը հնարավորություն տվեց լայն շրջանակներով հիմնախնդիրը ներկայացնել, ծանոթանալ միմյանց դոկտրինալ մոտեցումներին... Շատ կարեւոր է, որ մենք առաջին հերթին հարցին մոտենում ենք մարդու ինքնարժեւորման տեսանկյունից եւ տեսնում ենք այս խնդիրը նրա մշակութային համատեքստում: Հարց է առաջանում՝ վերջին հաշվով մարդու ինքնարժեւորումն ինչով է պայմանավորված: Արդյոք մարդու ինքնարժեւորումը նույնապե՞ս բացարձակ է, թե՞ որոշակի սոցիալական միջավայրով պայմանավորված երեւույթ:



Չափազանց կարեւոր է նաև տեսնել, թե այդ ինքնարժեւորումը որքանով է դառնում մարդու եւ քաղաքացու վարքագիծը թելադրող հենք: Մեր իրավական հարաբերությունների համար բացառիկ կա-

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

յետոր է, թե ինչպիսին է անձի սոցիալական վարքագիծը, ինչպիսին է իշխանության, հանրային եւ քաղաքական վարքագիծը եւ ինչպիսի արժեքներ են ընկած այդ վարքագիծի հիմքում: Եւ ուղղակի, թե անուղղակի մենք հանգում ենք նրան, որ եթե մարդու սոցիալական վարքագիծի եւ իշխանության հանրային վարքագիծի հիմքում իրավունքի գերակայության սկզբունքն է, ապա այս արժեքանության հենքի վրա մենք կարող ենք մոտենալ նաեւ այն հարցին, թե արժանապատվության ինքնարժեւորման աստիճանը, պայմանավորված նաեւ նրա վարքագծով, ինչպիսի դրսեւորումներ ու գնահատում կարող է ունենալ: Այս տեսանկյունից, իմ կարծիքով, հարցին պետք է մոտենալ հետեւյալ դիտանկյունից՝ անձ-պետություն հարաբերություններ եւ միջանձնային հարաբերություններ: Այսինքն եւ ուղղահայաց, եւ հորիզոնական հարաբերությունների հարթության վրա... Այս տեսանկյունից սահմանադրական դատարանների պրակտիկան կարծես թե ունի ընդհանրություն, եւ մենք փորձում ենք այս հարցի բացահայտումը տեսնել յուրաքանչյուր կոնկրետ գործի քննության առանձնահատկությունների շրջանակներում եւ բացահայտել, թե որքանով է այս կամ այն ազդեցությունը հանգեցնում կամ իրավունքի սահմանափակման կամ արժանապատվության ունահարման:

Անդրադառնալով 19-րդ միջազգային խորհրդաժողովում ձեւավորված վիրտուալ սահմանադրական դատարանին, պարոն Հարությունյանն ասաց, թե խորհրդաժողովի աշխատանքների սկզբում մասնակիցներին բաժանվել էր հարցաքերթիկ, եւ ընթացքում բավականին հետաքրքիր պատասխաններ ստացվեցին: Թվարկված է եղել 36 իրավունք, որոնցից բոլորի վերաբերյալ դրական արձագանքներ եղել են: Ի դեպ, ցանկից դուրս մասնակիցների կողմից ավելացվել է եւս երկու իրավունք, որոնք նույնապես կարեւոր են արժանապատվության իրացումը երաշխավորելու համար: Մասնավորապես շեշտվել է սեփականության իրավունքը եւ արժանապատիվ կյանքի իրավունքը:

Ապա ներկայացրեց վիրտուալ սահմանադրական դատարանի կողմից ընդունված՝ անձի արժանապատվության իրացման համար անհրաժեշտ իրավունքների նվազագույն ցանկը.

1. Կյանքի իրավունք
2. Ազատության իրավունք
3. Արժանապատվության եւ դրա պաշտպանության իրավունք
4. Անվտանգության եւ անձեռնմխելիության իրավունք

5. Իրավահավասարություն
6. Բռնության, անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելք
7. Պետական մարմինների կողմից կամայական վերաբերմունքից պաշտպանություն
8. Ստրկության եւ հարկադիր աշխատանքի արգելք
9. Առանց անձի համաձայնության բժշկական եւ գիտական փորձերի արգելքը
10. Մահացածի հիշատակի հարգելը
11. Ազատությունից զրկված անձանց՝ մարդկային պայմանների իրավունք
12. Անձի ինքնավարություն
13. Անմեղության կանխավարկած
14. Անձնական կյանքի հարգման եւ պաշտպանության իրավունք
15. Իրավական պաշտպանության իրավունք:

Միջազգային վիրտուալ սահմանադրական դատարանի կողմից նշվեց, որ անձի արժանապատվության սահմանադրական կարգավիճակի էությունն առավել ամբողջական դրսեւորվում է հետեւյալ երկրների սահմանադրական դրույթներում՝

1. Լեհաստանի Սահմանադրության 30-րդ հոդվածը. «Մարդու քնական եւ անօտարելի արժանապատվությունը հանդիսանում է մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների աղբյուրը: Այն անքակտելի է, դրա հարգանքը եւ պաշտպանությունը հանդիսանում է հանրային իշխանությունների պարտականությունը»:

2. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը. «Մարդու արժանապատվությունն անձնումիտելի է: Այն հարգելը եւ պաշտպանելը հանդիսանում է յուրաքանչյուր պետական իշխանության պարտականությունը»:

3. Բելգիայի Թագավորության Սահմանադրության հոդված 23-ը. «Յուրաքանչյուրն իրավունք ունի վարել մարդկային արժանապատվությանը համապատասխան կյանք»:

... Երեւանյան 19-րդ միջազգային խորհրդաժողովն ավարտեց իր աշխատանքները:

Խորհրդաժողովում ներկայացված գեկույցները առաջիկայում կհրապարակվեն քառալեզու «Ալմանախ»-2014 տարեգրում:

ՀՅՈՒՐԵՐ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 5-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Վրաստանից եւ Գերմանիայից ժամանած հյուրերի, ովքեր Հայաստանում են գտնվում Հայաստանի եւ Վրաստանի սահմանադրական հանձնաժողովների միջեւ աշխատանքային քննարկումների շրջանակներում:

Հյուրերի կազմում էին Վրաստանի Պառլամենտի անդամ, իրավական հարցերով հանձնաժողովի նախագահ Վախիթանգ Խոմալաձեն, Վրաստանի սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամներ Գիորգի Ջվերենչխիլաձեն, Իորի Թարուցաձեն, Գերմանիայից՝ պետական եւ վարչական իրավունքի պրոֆեսոր Ջրիստոֆ Դեգենհարքը, «Հարավային Կովկասում իրավական եւ դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի (GIZ) ղեկավար Հայաստանում Վարդան Պողոսյանը, նույն ծրագրի իրավական խորհրդատու Հայաստանում Ենս Փորցուցեքը, նույն ծրագրի իրավական խորհրդատու Վրաստանում Թորնիկե Դարզանիան:



Քննարկվեցին Վրաստանում, Հայաստանում եւ միջազգային պրակտիկայում սահմանադրական զարգացումներին առնչվող մի շարք հարցեր: Հընթաց տրվող հարց ու պատասխաններով անդրադարձ կատարվեց Վրաստանում իրականացվող սահմանադրական բարեփոխումներին:

Հյուրերը ծանոթացան ՀՀ սահմանադրական դատարանի գործառույթներին, այցելեցին նիստերի դահլիճ, խորհրդակցական սենյակ:



ՄՊ մամուլի ծառայություն

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Խոր ցավ եմ ապրում իմ լավ բարեկամ, ազգին ու ժողովրդին անմնացորդ նվիրված, քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության բացառիկ գիտակցությամբ օժտված, իմաստուն ու խոհեմ հայորդու՝ Վլադիմիր Մովսիսյանի վախճանի համար, ում հետ երեք տասնամյակից ավելի ընկերության, հարազատության ու աշխատանքային ճանապարհ եմ անցել: Ավաղ, բոլորին համար անխուսափելի մահվան հարվածն այսօր հասավ հայրենի ժայռերի պես ամուր ու հաստատուն մեր ընկերոջը:

Վլադիմիր Մովսիսյանի մասին շատերն են արտահայտվել ու էլի շատ բան կգրվի: Գուցե նաև ես պարտքի զգացումով դեռ առիթ կունենամ շատ փակագծեր բացել: Սակայն այսօր իսկ ընդհանուր գիտակցումն այն է, որ մենք համազգային կորուստ ունեցանք: Արժանահիշատակ մեր բարեկամը եզակիներից էր, որ օրինասական պահերին կարողացավ անել այն, ինչն այլոց համար անկարելի կլիներ:

Հայրենիքի հոգսը որպես բավարարություն տանող խաչուսյալի հավատով նա հայրենի հողի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքը պաշտամունք դարձրեց՝ դողալով նրա ամեն մի կտորի համար:

Նա հասցեց իր կյանքի գործն անել ամենայն սիրով ու նվիրումով, հայրենիքի խոր զգացողությամբ, երկրի հանդեպ իր խոհեմ պահվածքով՝ իր ուսերին պատվով ու արժանապատվությամբ կրելով վաստակի ծիրանին, առաջացած տարիքում անգամ շարունակելով մնալ երկրի կայացման ու շենացման գործին լծված հավատարիմ զինվոր:

Միսիքարություն Մովսիսյանի ընտանիքին, հարազատներին, բոլոր նրանց, ովքեր բախտ ու պատիվ ունեցան նրա հետ աշխատանքային ճանապարհ անցնել եւ ընկերություն անել:

Խաղաղություն նրան Երկնային իր ճանապարհին:

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
6 նոյեմբերի 2014թ.**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
[http://www.concourt.am.](http://www.concourt.am)

Ստորագրված է տպագրության՝ 09.12.2014 թ.
Դասիչ՝ 77754
Գրաշափը՝ 70x100 1/16
Տպարանակը՝ 400

**ՀՀ ՍԴ լրեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակակորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
արենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրապարակությունների ցուցակում**

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(74) 2014
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(74) 2014
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Armenie. N 4(74) 2014